Ազգ
Azg
15 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2013 ԵՐԵՔՇԱԲԹԻ 175(5258)
ISSN: 1829-1651

# Թուրքիան նոր մարտահրավերների առաջ

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Եվրոպայի եւ Մերձավոր Արեւելքի երկրների միջեւ որպես ՆԱՏՕ-ական կառույցի աշխարհաքաղաքական կամուրջ ներկայանալով՝ Թուրքիան այնքան է բարելավել իր տնտեսական եւ միջազգային կերպարը, որ օսմանյան փառասիրական ձգտումները դարձյալ գլուխ են բարձրացրել երկրում: Վարչապետի եւ արտգործնախարարի երկու բարձրագույն պաշտոններ վստահվել են համապատասխանորեն Ռեջեփ Թայիփ Էրդողանին եւ Ահմեդ Դավութօղլուին: Հակառակ հայերի ցեղասպանության եւ Բալկաններից մինչեւ Հյուսիսային Աֆրիկա ձգվող արյունահեղությունների վերաբերյալ գոյություն ունեցող փաստերին, վերջինս որպես դիվանագետ սկսել էր կարոտախտի դրսեւորումներով ուրվագծել Օսմանյան կայսրությունը, որտեղ հպատակ ազգությունները ապրում էին «եղբայրական սիրո» եւ «ներդաշնակության» մթնոլորտում:

Բարգավաճող տնտեսության եւ Իսրայելի հետ դարբնված գերիշխանության դինամիկայով լիցքավորված՝ Անկարան հույսեր էր փայփայում, որ տարածաշրջանը կվերաձեւավորի համապատասխան իր երազանքներին: Դավութօղլուն հպարտորեն հրապարակ էր նետել հարեւանների հետ «զրոյական» խնդիրներ ունենալու իր նոր քաղաքականությունը, որն իրականում նշանակում էր ստիպել հարեւաններին՝ ՆԱՏՕ-ի ուժերի հովանու ներքո ընդունել այդ քաղաքականությունը:

Վերջին տասնամյակում իշխանության ղեկն իր ձեռքում պահած Էրդողանի «չափավոր» իսլամիստական կուսակցությունը ստիպված էր սանձել իր ներքին եւ արտաքին քաղաքականության փառասիրությունները, հասկանալով, որ իրենց ուժերից վեր գործ են բռնել:

Հակառակ տնտեսության նվաճումներին՝ ներքին քաղաքականությունը դեմ առավ որոշ խոչընդոտների, ինչպես ցույց տվեցին Գեզի պուրակի ցույցերը: Էրդողանը խելացի գտնվեց ի չիք դարձնելու հնարավոր մեկ այլ խնդիր՝ քրդական հարցը, որը կարող էր տապալել իր իշխանությունը, եթե միանար որպես բնապահպանական շարժում սկսված զանգվածային ընդվզումներին, որոնք հետագայում տարածվեցին ամբողջ երկրով մեկ:

Քրդերը սովորաբար որեւէ քայլի չէին դիմում՝ սպասելով PKK-ի բանտարկված առաջնորդ Աբդուլլահ Օջալանի հետ Էրդողանի կառավարության անցկացրած բանակցությունների արդյունքներին:

Ներկայումս Էրդողանի անձնական ու իր երկրի փառասիրությունները խստագույն քննության են ենթարկվում: Անձամբ ինքը՝ Էրդողանը, պատրաստվում է մասնակցել առաջիկա նախագահական ընտրություններին, նպատակ ունենալով զբաղեցնել իր երբեմնի դաշնակից Աբդուլլահ Գյուլի պաշտոնը: Նա արդեն իսկ հրապարակել է բարեփոխումների իր փաթեթը, որը նախագահական աթոռի հաջորդ հայտ ներկայացնելու համար կոչ է անում ստեղծել ներքին կոալիցիաներ: Հարեւանների հետ «զրոյական խնդիրներ» ունենալու նրա արտաքին քաղաքականությունը ամբողջովին ձախողված կարելի է համարել, քանի որ Անկարան, չարաշահելով իր դիրքը, միջամտել է յուրաքանչյուր հարեւանի ներքին գործերին:

Սեպտեմբերի 30-ին հրապարակված Էրդողանի բարեփոխումների փաթեթը ընդհանուր դժգոհություն առաջացրեց: Այն չէր բավարարում քրդական սպասելիքները: Քրդերն ամբողջական անկախության իրենց պայքարը սկսել են 30 տարի առաջ: Այդ անկախությունը նշանակում է Թուրքիայի մասնատումը, մի բան, որ աշխարհի հզորները թույլ չեն տա: Եվ Օջալանը գիտակցում է դա: Ինչ վերաբերում է մշակութային ինքնորոշման խնդրին, որը նշանակում էր առաջին հերթին քրդերեն լեզվի օգտագործումը, ապա Էրդողանի ծրագիրը միայն արջի ծառայություն էր մատուցում, քանի որ թույլատրում է դասավանդել համայնքի լեզվով միայն մասնավոր դպրոցներում, որտեղ շատ քիչ քրդերի երեխաներ ի վիճակի կլինեն հաճախելու: Ահաբեկչական օրենքները դեռեւս ուժի մեջ են: Դրանք 40 հազար քրդերի կյանք են խլել: Նոր սահմանադրությամբ խորհրդարանական ընտրություններում կուսակցությունների ընտրական արգելապատնեշի իջեցումը նույնպես չի բավարարում քրդերին, քանի որ նրանք գիտակցում են, որ եթե նույնիսկ առանձին շրջաններում պաշտպանություն վայելեն, ապա համազգային մակարդակով չեն կարողանա բավարար քվեներ ստանալ:

Տես էջ 3

# Օդանավակայանը թռիչքների՞ համար է, թե՞…

*Ի՞նչ անել «Զվարթնոցի» հին շենքը*

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



Երեւանի նոր օդանավակայանի շինարարությունը սկսվեց 2008-ին: Մինչ այդ երկար բանակցություններ վարվեցին արգենտինահայ հայտնի գործարար Էդուարդո Էռնեկյանի հետ, Հայաստանի կառավարությունն ու գործարարին պատկանող ընկերությունը պայմանավորվեցին, որ պետք է կառուցվի նոր, ժամանակակից ամենաբարձր չափանիշներին համապատասխանող օդանավակայան: Այդ նպատակի համար արգենտինահայ գործարարը պետք է կատարեր 320 մլն դոլարի ներդրում՝ ներառյալ ենթակառուցվածքներն ու ժամանակակից սարքավորումները: Ընդամենը 2 տարի անց օդանավակայանի նոր համալիրն արդեն կառուցված էր: Իսկապես հոյակապ եւ աշխարհին ներկայանալի օդանավակայան, որով, անկասկած, հպարտանում ենք բոլորս:

Տես էջ 2

# «Երբ Նոյն իջավ տապանից»

*Ըստ մասնագետի՝ պաղպաղակի շուկայում վերջին անգամ հենց այդ ժամանակ է ուսումնասիրություն կատարվել*



«Գյուղատնտեսության նախարարության սննդի անվտանգության պետական ծառայությունը անցնող տարվա ընթացքում ոչ մի լուրջ բացահայտում չի արել», գնահատականը «Իրազեկ եւ պաշտպանված սպառող» ՀԿ-ի նախագահ **Բաբկեն Պիտոյանինն** է: Թեպետ ՀԿ-ն ցանկանում է համագործակցել տեսչության հետ, սակայն այս ցանկությունը միակողմանի է, եւ որեւէ արդյունք չի գրանցվում: Խնդիրն այն է, որ պաղպաղակի շուկայի հետ կապված ՀԿ-ի եւ տեսչության ջրերը մեկ առվով չեն հոսում: ՀԿ-ն պաղպաղակի շուկայում իրականացրել է հետազոտություններ եւ հայտնաբերել մակնշման հետ կապված խնդիրներ եւ կոչ արել սննդամթերքի անվտանգության պետական տեսչությանը՝ հիմք ընդունելով պաղպաղակների սխալ մակնշումը, իրականացնել դիտարկում եւ փորձաքննության ենթարկել պաղպաղակները: «Փոխադարձ երկկողմանի աշխատանքներ իրականացնելու փոխարեն սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը հունիսի 28-ին, իր պաշտոնական կայքում տեղեկություն հրապարակեց, որ բացի «Շանթ»-ից որեւէ այլ ընկերություն խախտում չի արել», ասաց Բաբկեն Պիտոյանը:

Տես էջ 2

# Գյումրու օրը՝ «Հացի փառատոնով» եւ ազգային խոհանոցի ու կենցաղի ցուցահանդեսով

Մեր տարբեր մակարդակների իշխանավորները, թվում է, մի զարմանալի սովորություն ունեն իրենց մասնակցությամբ ամեն ինչ վերածելու շոուի, ցուցադրության, Երեւանից դուրս ամենագեղեցիկ տոնախմբությունն իսկ՝ հանրապետության որեւէ ղեկավար պաշտոնյայի այցի, պայմանավորելով այդ այցով: Անցած կիրակի՝ հոկտեմբերի 13-ին, Գյումրու ժողովրդական ճարտարապետության եւ քաղաքային կենցաղի թանգարանի (Ձիթողցյանների տան) ընդարձակ բակում հավաքված առնվազն մի քանի հարյուր մարդ, նաեւ քաղաքի հյուրեր ու միջոցառումների մասնակիցներ, շատերը՝ երեխաներին գրկած, ստիպված եղան նշանակված ժամից հետո եւս մեկ ժամ այրող արեւի տակ սպասել, մինչեւ քաղաքապետարանից ժամանեցին ղեկավար պաշտոնյաները՝ վարչապետ Տիգրան Սարգսյանի գլխավորությամբ, եւ Գյումրի քաղաքի օրվա մեկնարկային միջոցառումը՝ «Հացի փառատոնը» սկսվեց… Եվ սա, ցավոք, նման դեպքերի համար նորություն չէ:

Իսկ քաղաքի օրվա այս անգամվա ծրագիրը նախորդներից կարծես թե շահեկանորեն տարբերվում էր հենց նրանով, որ ավելի շատ տեղ տրված էր ոչ թե ցուցադրական կողմին, այլ ժողովրդականությանն ու մարդկանց ավելի շատ մասնակցությանը: Առավոտից բաց դռների օր էր հայտարարված քաղաքի մշակույթի օջախներում, մասնավորապես՝ Ստեփան Ալիխանյանի անվան տիկնիկային թատրոնում, վեց թանգարաններում, մարզային, քաղաքային գրադարաններում, «Հոկտեմբեր» կինոթատրոնում: Նախատեսված էին կերպարվեստի տարբեր ցուցահանդեսներ, բռնցքամարտի միջազգային պատանեկան մրցաշար…

Տես էջ 2

# Ջամիլ Հասանլիին Ադրբեջանից արտաքսում են ԱՄՆ դեսպանի օգնությա՞մբ

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Նախագահական «ընտրություններից» հետո ընդդիմադիր թեկնածու Ջամիլ Հասանլին Բրյուսել եւ Վաշինգտոն այցի հրավերներ է ստացել: Հայտնի չէ, թե նրան ի՞նչ մակարդակի ընդունելություն է խոստացվել, բայց Բաքվում իշխող վարչախումբն արդեն իսկ խիստ անհանգստացած է:

Ադրբեջանի ՊՆ մամլո ծառայությունը տեղեկություն է տարածել, որ Սաֆար Աբիեւը հանդիպել է Բաքվում ԱՄՆ դեսպանին եւ հիշեցրել Ազատության աջակցության ակտի 907 ուղղման մասին, որ «հեղինակներն Ադրբեջանին մշտապես պահում են նշանացույցի տակ»: Աբիեւը դժգոհել է ԱՄՆ պետդեպարտամենտի՝ նախագահական «ընտրությունների» խիստ գնահատականներից եւ ասել, որ 2008թ. Հայաստանի ընտրությունները պետդեպարտամենտը դրական է գնահատել՝ «չնայած զանգվածային անկարգություններին»:

Ադրբեջանում իշխող վարչախմբում Սաֆար Աբիեւն ունի «արեւմտյան երկրների դրածո»-ի համարում: Պատահական չէ, որ հենց նա է հանդիպել Բաքվում ԱՄՆ-ի դեսպանին: Ինտրիգը, սակայն, այն է, որ նույն օրը Բաքվում ԱՄՆ դեսպանատունը որեւէ հաղորդագրություն չի արել դեսպանի եւ Ադրբեջանի պաշտպանության նախարարի հանդիպման մասին, ինչից ադրբեջանական որոշ մեկնաբաններ ենթադրել են, որ «կողմերը հավանաբար քննարկել են հրապարակման ոչ ենթակա հարցեր»:

Ըստ Ադրբեջանի ՊՆ հաղորդման, դեսպան Մորնինգսթարն ասել է, որ «ընտրություններն արդեն անցյալում են, հաղթել է Իլհամ Ալիեւը, իսկ հետընտրական գնահատականները չեն կարող ազդել հայտնի արդյունքների վրա»: Դեսպանը փաստացի հավաստել է, որ ԱՄՆ-ը չի աջակցի քվեարկության արդյունքները վիճարկող որեւէ նախաձեռնության:

Երեկ այս համատեքստում չափազանց ուշագրավ հայտարարություն է արել Ադրբեջանի իշխող կուսակցության գործադիր քարտուղարի տեղակալ Սիավուշ Նովրուզովը: Նրա կարծիքով՝ «Ջամիլ Հասանլին չի վերադառնալու արտասահմանյան ուղեւորությունից»: Նովրուզովի ասելով, «Ջամիլի բոլոր մտերիմները վաղուց արտասահմանում են, նա այստեղ (Բաքվում) անելիք չունի»:

Տես էջ 5

ԱԶԳ

## Ընթացիկ

# Օդանավակայանը թռիչքների՞ համար է, թե՞…

1-ին էջից

«Զվարթնոցի» կոնցեսիոն կառավարիչ «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ընկերությունն այժմ նպատակ ունի նոր մաստեր-պլան ներկայացնել, որով նախատեսվում է ապագայում ընդլայնել օդանավակայանը՝ հասցնելով մինչեւ 3,5 մլն ուղեւոր սպասարկելու հնարավորությունների: Դրա համար կոնցեսիոն կառավարիչը ցանկանում է ընդլայնել օդանավակայանը, անհրաժեշտություն կլինի քանդել օդանավակայանի հին եւ ներկայումս չօգտագործվող շենքը: Թվում է, թե որեւէ խնդիր չպետք է առաջանա, քանի որ այդ շենքն այլեւս չի գործածվում ըստ նշանակության, եւ նոր օդանավակայանն էլ արդեն լիարժեք գործում է: Սակայն, ինչպես հաճախ է պատահում վերջերս, այս անգամ եւս զարգացման ծրագիրը բախվում է դիմադրության:

Հասարակության եւ մասնավորապես ճարտարապետների որոշակի շրջանակներ դեմ են արտահայտվում «Զվարթնոցի» հին շենքը քանդելուն, ասելով, որ ճարտարապետական հուշարձան է, որը նաեւ միջազգային մրցանակ է շահել: Նրանք առաջարկում են օգտագործել այս շենքը, բայց թե ինչպե՞ս, ըստ էության որոշակի չեն ասում: Ոմանք առաջարկում են այն օգտագործել այսպես կոչված ներքին թռիչքների համար, մյուսներն առաջարկում են պահպանել պարզապես որպես հուշարձան եւ նոր օդանավակայանին հարակից կառույց: Սակայն թե առաջին, թե երկրորդ տեսակետները չեն դիմանում քննադատության:

Նախ անհասկանալի է, թե ի՞նչ ներքին թռիչքների մասին է խոսքը: Հայաստանում ո՞ր քաղաքից որ քաղաքն են թռչում օդանավով: Եթե անգամ ապագայում գործարկվեն փոքր օդանավակայաններ եւ՝ ենթադրենք, Երեւանից Գյումրի կամ Վանաձոր չվերթեր լինեն, ապա անհրաժեշտ է, որ առաջին հերթին այդ շենքը կարողանա սպասարկել այդ թռիչքները, այսինքն՝ կատարի իր գործառնական նշանակությունը: Ակնհայտ է, որ դա հնարավոր չէ: Շենքն ապահովված չէ այն սարքավորումներով, որոնք անհրաժեշտ են թռիչքները սպասարկելու համար, ի սկզբանե սխալ լուծումներով է կառուցվել որպես օդանավակայան, իսկ օդանավային թռիչքներ սպասարկելը տաքսիների դիսպետչերական կետ չէ եւ պահանջում է խիստ մասնագիտացված մոտեցում: Եվ հետո, ինչպե՞ս կարելի է կոնցեսիոներից պահանջել, որ օգտագործի այս շենքը, եթե ընկերության մասնագետները գտնում են, որ հին շենքն այլեւս պիտանի չէ որպես օդանավակայան: Պարզապես զարմանալի է, երբ մարդիկ, ընդ որում մտավոր աշխատանքով զբաղվող մարդիկ, առանց հաշվի առնելու այլ ոլորտի մասնագետների կարծիքները, վերջնագրային ձեւով իրենց տեսակետն են պարտադրում: Չենք խոսում այն մասին, որ Հայաստանում նման մեծածավալ ներդրումներ կատարած անձի եւ նրա ընկերության հետ նման ձեւով խոսելն արդեն իսկ անընդունելի է, հատկապես եթե նման ներդրողների առատություն, մեղմ ասած, չունենք:

Առավել արտառոց է շենքը որպես թանգարան պահպանելու առաջարկը: Նախ շենքն արդեն իսկ քայքայվում է, հիմնանորոգելու եւ պահպանելու համար հսկայական ծախսեր են անհրաժեշտ: Մասնավորապես նշվում է 10-12 մլն դոլար: Ո՞ր կառույցը պետք է պահպանի կամ շահագործի շենքը, որպես ի՞նչ պետք է պահպանվի՝ ուղղակի ճարտարապետական հուշարձան, թե՞ թանգարան իր ցուցանմուշներով: Եթե որպես շենք, ապա ո՞րն է դատարկ շենքը որպես արձան պահպանելու իմաստը: Ծիծաղելի է այն համեմատել համաշխարհային ճարտարապետության գլուխգործոցների հետ, որոնք պահպանվում են տարբեր երկրներում եւ հազարավոր զբոսաշրջիկների հոսք ապահովում: Այս շենքը երբեք աչքի չի ընկել զբոսաշրջիկների համար որպես գրավիչ հուշարձան, ինչպես օրինակ՝ Զվարթնոց տաճարի ավերակները: Եթե որպես թանգարան, ապա ի՞նչ թանգարան եւ ո՞վ է այցելելու քաղաքից կտրված եւ պարբերաբար օդանավերի թռիչքներով խլացվող այդ տարածքը: Ի՞նչ կարելի է այնտեղ ցուցադրել, որ, այս հանգամանքներից անկախ, գրավի այցելուներին, եւ եթե այդ նույն ցուցանմուշները կարելի է պահել քաղաքում, ինչո՞ւ դրանք տանել քաղաքից դուրս գտնվող շենք:

Եվ ամենակարեւորը, կրկին հիշեցնենք, որ «Զվարթնոցի» հին շենքը կառուցվել է որպես օդանավակայան, իսկ օդանավակայանը թռիչքների համար է, ոչ թե պարզապես շենք: Եթե այլեւս օդանավակայան չէ, ուրեմն շենքն այլեւս պետք չէ, եթե չի ծառայում այն նպատակին, ինչի համար ստեղծվել է, առավել եւս չի կարող այլ նպատակի ծառայել: Ուրեմն պետք է միայն ողջունել, որ կառուցվել եւ կառուցվելու է նորն ու ժամանակակիցը, ինչին խանգարում է հին եւ այլեւս ոչ պիտանի դարձած շենքը:

# Գյումրու օրը՝ «Հացի փառատոնով» եւ ազգային խոհանոցի ու կենցաղի ցուցահանդեսով

1-ին էջից

**Սակայն օրվա տոնակատարությունների զարդը, անշուշտ, «Գյումրին 2013 թ. մշակութային մայրաքաղաք» ծրագրի շրջանակում կազմակերպված Հացի փառատոնը եւ ազգային խոհանոցի ու ավանդական կենցաղի ցուցահանդեսն էին՝ կազմակերպված ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի կողմից, ՀՀ մշակույթի նախարարության եւ Գյումրու քաղաքապետարանի աջակցությամբ:**

**Ջիթողցյանների տան բակի տարածքում թոնիրներ էին վառվել ու նոր թխվող լավաշի բույրն էր տարածվել, իսկ կենցաղի թանգարանի շենքի առջեւի հրապարակում ազգային, ազգագրական երգ ու պար էր, հնչում էին հացի ու հողի, գութանի փառաբանման երգեր, հորովելներ: Հացը համամարդկային արժեք է եւ կարող է դառնալ համայն մարդկության միավորման գործոն: Ինչպես նշեց Գյումրու քաղաքապետ Սամվել Բալասանյանը, Հացի փառատոնը ծառայում է ազգային ավանդույթների վերականգնման նպատակին, ժողովրդական մշակույթը, ազգային ծեսերն ու տոներն ավելի կազմակերպված դարձնելուն՝ որպես քաղաքի զարգացման մի գրավական: Փառատոնի խորհուրդն էր՝ միավորել մարդկանց, տոնը դարձնել հոգեվիճակ, դարձ կատարել դեպի այն արժեքները, որոնք ապրեցնում են եւ վկայում են մեր ժողովրդի արարող ոգու մասին: Տոնը փառաբանություն էր հողի, սերմի եւ հասկի, հասկի ու հողի մշակի: Թանգարանի բակում մարզի տարբեր գյուղերից բերված, տարբեր ազգագրական գոտիներ ներկայացնող հացի տեսակներ, ավանդական կենցաղի առարկաներ, ազգային խոհանոցի կերակրատեսակներ, հողի բարիքներ էին ցուցադրվում, բոլորին հրավիրում, հյուրասիրում էին:**

**«Մեծ խորհուրդ կա, որ քաղաքի տոնը նշվում է հացի փառատոնի հետ միասին,- տոնի առթիվ շնորհավորելով գյումրեցիներին, ասաց վարչապետ Տիգրան Սարգսյանը:- Եվ այդ խորհուրդն այն է, որ Գյումրին ոչ միայն վերականգնվում-վերածնվում է, այլեւ այն տոնական տրամադրությունը, որ այսօր կա ժողովրդի մեջ, լինելու է այսուհետեւ շարունակական»: Վարչապետն ու տոնակատարության մի խումբ մասնակիցներ նաեւ այցելեցին քաղաքի Հաղթանակի պուրակ, դիտեցին քանդակագործության միջազգային սիմպոզիումի մասնակից արվեստագետների աշխատանքն ու զրուցեցին քանդակագործների հետ:**

**«Հոկտեմբեր» կինոթատրոնի դահլիճում տեղի ունեցավ պատվավոր պարգեւների հանձնման ամենամյա արարողությունը: Համայնքային ավագանու որոշման համաձայն «Գյումրու պատվավոր քաղաքացի» կոչումներ շնորհվեցին ժողովրդական արտիստուհի Վարդուհի Վարդերեսյանին, կոմպոզիտոր Վլադիլեն Բալյանին, պետական եւ հասարակական գործիչ Միսակ Մկրտչյանին: Հաշմանդամների «Փյունիկ» հասարակական կազմակերպության ղեկավար Արմենուհի Նիկողոսյանը եւ Երեւանի պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի ղեկավար Կարինե Ավդալյանը պարգեւատրվեցին Գյումրու քաղաքապետի հուշամեդալով:**

**Գյումրու օրը եզրափակվեց երեկոյան քաղաքի Թատերական հրապարակում կազմակերպված տոնական համերգով ու հրավառությամբ:** Գ. Մ.

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

# Երեւանի քաղաքապետի ոսկե մեդալներ

**Երեւանի 2795-ամյակի կապակցությամբ Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը մի շարք ոլորտներում բազմամյա եւ ակտիվ գործունեություն ծավալած անձանց պարգեւատրել է քաղաքապետի ոսկե մեդալով:**

**Երեւանի քաղաքապետի ոսկե մեդալով են պարգեւատրվել նաեւ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի տնօրեն Գագիկ Գյուրջյանը, Հայաստանի շինարարների միության նախագահ Գագիկ Գալստյանը, Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի դասախոս, դոցենտ Մարգարիտա Մնացականյանը, Թաթուլ Ալթունյանի անվան Հայաստանի երգի-պարի պետական անսամբլի պարուսույց Հովհաննես Խաչիկյանը. Հանրային ռադիոյի հաղորդավար, ՀՀ վաստակավոր արտիստ Սարգիս Նաջարյանը, ռազմարվեստի դասախոս Մերուժան Տեր-Գուլանյանը, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գեղագետ Յակով Խաչիկյանը:**



*Քաղաքապետը պարգեւատրում է Տիգրան Լիլոյանին (ձախից):*

**Երեւանի քաղաքապետի ոսկե մեդալով են պարգեւատրվել Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության էստրադային եւ սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Երվանդ Երզնկյանը, Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի տնօրեն Կամո Հովհաննիսյանը, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ի տնօրեն Արա Մինասյանը:**

**Լրատվության բնագավառում նշանակալի ավանդի եւ անմնացորդ աշխատանքի համար քաղաքապետի ոսկե մեդալով է պարգեւատրվել ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակից Տիգրան Լիլոյանը:**

# «Երբ Նոյն իջավ տապանից»

1-ին էջից

Նա հավելեց, որ որոշ ժամանակ անց սննդի անվտանգության պետական տեսչությունը գրություն է ստացել, կայքում հայտարարել են, որ հանդիպել են պաղպաղակ արտադրող ընկերությունների հետ եւ խախտումները վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ տվել: «Փաստորեն երեք օրվա մեջ սննդի անվտանգության պետական տեսչությունն իրար հերքող հայտարարություններ է տարածում», ասաց Պիտոյանը:

Սննդի անվտանգության եւ որակի հսկողության տեսչության պետ **Արման Արարատյանը** կատարվածի առնչությամբ այլ բացատրություն է ներկայացնում. նրա խոսքերով, այն ընկերություններում, որտեղ շրջանառությունը 70 միլիոնը չի գերազանցում, ստուգումներ իրականացնելու համար հարկավոր է վարչապետից թույլտվություն ունենալ: Արարատյանի ներկայացմամբ՝ իրենք պետք է գործեն համաձայն օրենսդրության, պետք է դիմեն եւ ստանան թույլտվություն հետազոտություններ անցկացնելու համար: «Սննդի անվտանգության ոլորտում չկա մի խնդիր, որը լուծվի մեկ շաբաթում: Հասարակության մեջ տպավորություն է ստեղծվում, որ մեզ ասում են, նոր ենք անում, բայց մեզ ասողը օրենսդրությունն է եւ մենք իրավունք չունենք շեղվելու դրույթներից», հակադարձեց Արարատյանը՝ անպատասխան թողնելով հարցը՝ ստուգումներ չէին կատարել, ինչու էին հայտարարել, որ բացի «Շանթ»-ից՝ մնացած ընկերությունները խախտումներ չեն արել: «Այնուամենայնիվ սննդի անվտանգության պետական ծառայությունը իր պարտավորությունները գրեթե չի կատարում, թերանում է իր աշխատանքում, իսկ ինչ վերաբերում է պաղպաղակի շուկայում ուսումնասիրություններ կատարելուն, «ապա դա եղել է այն ժամանակ, երբ Նոյն իջավ տապանից»: Հ. Հ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Ժամանակակից աշխարհում բավականին շատ են քաղաքական իմիջի ձեւավորման չափանիշներն ու կողմնորոշիչները: Ամերիկյան քաղաքական գովազդերում շրջանառվում է քաղաքական գործչի երեք հիմնական բնութագրիչ. բարձր ինտելեկտը, ներքին մեծ պոտենցիալը (անձի ուժ, կամք, էներգիա), բարոյական բարձր որակները (ազնվություն, օրինավորություն): Քաղաքական գործչի ռուսական մոդելում ուշադրություն է դարձվում անձի էությանը, մասնավորապես նրա խարիզմատիկությանն ու ինտելեկտին, երկրի եւ ժողովրդի նկատմամբ արտահայտված վերաբերմունքին, վարքագծին ու գործունեությանը: Իսկ անհուսալի: Դա իրականում վարկաբեկելի տեղեկատվություն էր, քանի որ անմիջապես առնչվում էր նախ եւ առաջ մի ամբողջ երկրի վարկանիշի: Մամուլում շրջանառվող Զարուհի Փոստանջյանի Զուլֆիա անունը տեղին է, քանի որ Զարուհին իսկապես թուրքի (թշնամու) դավաճանի զուգորդություն առաջացրեց հեռուստադիտողների մեջ: Նա ադրբեջանական պատվիրակության նույն հարթության վրա էր կանգնած, ինչը կարելի է որակել որպես ուրացություն (ռենեգատություն): Ի դեմս այդ քաղաքական գործչի՝ մենք գործ ունենք մեր օրերի հուդայական կերպարի ու պոտենցիալ դավաճանի հետ, քադաշնակություն եւ անհամաչափություն: Հոգեբանական անվտանգության տեսանկյունից դա նշանակում է, որ կառավարման համակարգի տարբեր օղակների տարբեր աստիճանների տեղեկացվածության պատճառով անհավասարակշռություն է առաջանում կայացվող որոշումների միջեւ: Պատգամավորի մոտ ակնհայտ է անկայունության զգացումը, ըստորում կարելի է խոսել նաեւ կողմնորոշիչների բացակայության մասին (սոցիալ-հոգեբանական, քաղաքական, ազգային):

Այդ թաբլոիդային հարցադրումը կրկին խոսում է քաղաքական գործչի հավակնությունների եւ ինտելեկտուալ ու մասնագիտական

# Զարուհի Փոստանջյանի հարցադրումը կամ քաղաքական իմիջի մանկականության մոդելը



պահ հայկական էթնիկական միջավայրում քաղաքական գործչի մոդելի հիմքում (ըստ ուսումնասիրությունների) ընկած է առասպելական, դիցաբանական ներկայացում, հուզականային ոլորտը (հուզական հավասարակշռություն, կամքի ուժ), իմաստնությունն ու խարիզման: Դատելով Զարուհի Փոստանջյանի վերջին ժամանակների, հատկապես ԵԽԽՎ-ում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին հղված հարցադրման էությունից, կարելի է ենթադրել, որ նա չունի եւ չի էլ կարող ունենալ քաղաքական գործչին բնորոշ այնպիսի առաջնային որակներ, ինչպիսին հավասարակշռությունն է, սեփական հույզերը զսպելու կարողությունը, ճիշտ վճիռներ կայացնելու ընդունակությունն ու բարձր ինտելեկտը:

Փոստանջյանի հարցադրումը ոչ մի աղերս չունի ընդդիմության հետ: Նշենք, որ հարցադրման մոտիվացիան առավելագույնս եսասիրական է, լավագույն դեպքում խարսխված է կուսակցական շրջանակների հետաքրքրություններով: Նրանում արտահայտված թվացյալ «ազնվությունը», որը խիստ սուբյեկտիվ ու մակերեսային է, չափազանց արժեզրկված է: Հուշենք քաղաքական գործչին, որ այսպիսի «ազնվությունը» կարող է ադեկվատ ընկալում եւ հետադարձ կապ ապահովել խիստ նեղ, տվյալ պարագայում «Ժառանգություն» կուսակցության շրջանակների համար:

Փոստանջյանի հարցադրման կապակցությամբ մամուլում եւ տեղեկատվական դաշտում շրջանառվող նորությունները համոզում են, որ այն մեծ մասամբ տհաճություն է առաջացրել: Դա տրամաբանորեն այդպես էլ պետք է լիներ, քանի որ հաճույք հեռուստադիտողի կամ ունկնդրի մեջ առաջանում է այն դեպքում, եթե ներկայացվող տեղեկատվությունը համոզիչ է եւ ադեկվատ, իսկ երբ դիտողները կամ ունկնդիրները հայտնվում են տհաճ իրադրության մեջ, ապա քարոզչությունը (տվյալ պարագայում նաեւ քարոզչության նպատակ հետապնդող հարցադրումը) հակառակ արդյունքն է տալիս: Այսինքն՝ հաղորդվող տեսակետը շատ հեռու էր նույն հարցի վերաբերյալ ունկնդիրների տեսակետից, որի համար չընկալվեց եւ չէր էլ կարող ազդել նրանց հայացքների վրա: Հեռուստադիտողը չէր կարող ազդել ինֆորմացիայի աղբյուրի վրա, բայց այն վարկաբեկվեց եւ համարվեց նի որ նրա հետաքրքրությունները նեղ են եւ զերադասված են համարային եւ ազգային շահերից:

Ուշադիր հետեւելով պատգամավորի քաղաքական գործունեությանը՝ դժվար չէ հասկանալ, որ նման հարցադրումը նախապես մտածված եւ սեղմագրված էր: Հայաստանի համար իսկապես շատ պատասխանատու շրջանում, երբ երկրի նախագահը մեկնել էր հասուկ, որպեսզի եվրոպացիներին ներկայացնի մեր երկրի քաղաքականությունը, պատասխանի վարվող քաղաքականության վերաբերյալ հարցերին, Փոստանջյանը կատարեց պատվեր: Եվ դա ակնառու էր, քանի որ հարցադրումը ներդաշնակ չէր ստեղծված մթնոլորտին եւ որոշակիացված չէր: Կազինոների մասին խոսելը, ընդ որում, առանց որեւէ հիմնավորման, որոշակիացման, ոչ մի առնչություն չուներ ՀՀ պատվիրակության առաքելության հետ եւ կոնտրաստը ՀՀ նախագահի ելույթից հետո ակնառու էր: Դժվար չէր նկատել, որ հարցադրումը ՀՀ նախագահի ընտրություններում հաղթանակ կուսակցության պարտության բացասական էներգիայի սուբլիմացիայի կամ տրանսֆերի (տեղափոխման) կամ փոխհատուցման երեւույթն է ագրեսիայի պատճառ հանդիսացող օբյեկտի (տվյալ պահին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի) վրա: Փոխհատուցումը տվյալ պարագայում կոչված է իրական կոպիտ անբավարարվածության առիթով առաջացած վշտի զգացումը զսպելու համար: Փոստանջյանի մոտ գերփոխհատուցման երեւույթն է, համաձայն որի նա զարգացնում է այն տվյալները, որոնք իրականում չկան կամ թույլ են զարգացած նրա մոտ:

Հարցադրումը պարունակում էր, եթե կարելի է նաեւ այսպես անվանել, տեղեկատվական աններհնարավորությունների միջեւ առկա խզման աստիճանի մասին: Զարուհի Փոստանջյանին պետք է պատասխանատվության ենթարկի գոնե Հայաստանի Հանրապետության բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը: Նրան պետք է ցույց տրվի սեփական հնարավորորությունների եւ հավակնությունների անհամապատասխանության տեսանելի նշաձողը: Կատարվածի նկատմամբ վերաբերմունքը շատ կարեւոր է, քանի որ կլինի յուրատեսակ «լակմուսյան թուղթ»: Եթե համապատասխան պատիժ չլինի, ապա արդեն խոսք կլինի մեզանում առկա հոգեբանական եւ բարոյական լուրջ ճգնաժամի մասին:

Թշնամական ազդեցությունների հանդեպ ընկալունակությունը բնորոշ էր սոսկ օդանավակայանում Փոստանջյանին դիմավորողներին, իսկ տեղի ունեցածը հոգեբանական ռեգրեսի (նահանջի) բնորոշ օրինակ է: Այստեղ եւս առկա է անօգնականության եւ մանկականության մոդելը:

Վերջում երկու խորհուրդ տիկին Փոստանջյանին. իդեալական քաղաքական իմիջի ստեղծման գործում առանցքային որակ է համարվում իմաստնությունը: Ժողովուրդը ենթագիտակցորեն իր առաջնորդների եւ իր շահերը ներկայացնող կերպարների մեջ փնտրում է նախնիների սիմվոլներով ամրագրված բարձր որակներն ու գաղափարները: Պետք է հաշվի առնել նաեւ մի հանգամանք. քաղաքական իմիջի մեջ Ձեր երեխաների ընկալումներում առանձնացվում է նախ եւ առաջ մայրական կերպարը, իսկ Դուք հոգեբանական նույնացման օբյեկտ եք նրանց համար:

ԼՈՒՍԻՆԵ ՂԱՐԱԽԱՆՅԱՆ
Հոգեբան
Արցախ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

# Թուրքիան նոր մարտահրավերների առաջ

1-ին էջից

Քրդերը դժգոհ են նաեւ Թուրքիայի տարածքից PKK-ի զինված մարտիկների դուրսբերման համաձայնության առնչությամբ: Զինված մարտիկները միակ երաշխիքն էին զիջումներ կորզելու կառավարությունից: Նրանք դժգոհում են, որ իշխանությունները չեն կատարում խոստացված բարեփոխումները:

Թուրքիայի բնակչությունը 75 միլիոն է, որի 20 միլիոնը քրդեր են, մյուս 20 միլիոնը՝ ալավիներ, որոնց կրոնական իրավունքները ամբողջովին ոտնահարված են: Ալավիների էթնիկական ինքնասիրությունը զարթնել է ապրել հատկապես հարեւան Սիրիայում, որտեղ երկրի ալավի առաջնորդներն այժմ կյանքի եւ մահվան պայքար են մղում:

Էրդողանի սուննի վարչակազմը ամբողջովին անտեսել է ալավիների ձգտումները, դրանով իսկ ժամացույցով գործող ռումբ զետեղելով բարեփոխումների իր ծրագրի տակ: Մինչ Սիրիական եկեղեցուն խոստացվել է վերադարձնել որոշ սրբավայրեր, Հեյբելի կղզու հունական ճեմարանը դեռեւս փակ է մնում եւ Հունաստանի հետ որոշ փոխանակումների պայմանավորվածության տակ է գտնվում: Թուրքիան պահանջում է, որ ճեմարանի բացման դիմաց հունական կողմը Աթենքում երկու մզկիթ բաց անի:

Հույն ուղղափառ եկեղեցու պատրիարքը գլխավոր հովիվն է 300 միլիոն հավատացյալների, բայց Թուրքիան մերժում է ճանաչել նրա տիտղոսը: Եթե ճեմարանը փակ մնա, ոչ մի հոգեւորական չի կարողանալու նախապատրաստվել փոխարինելու տարիքն առած կրոնավորներին կամ պատրիարքին:

Նույնը կարելի է ասել նաեւ հայկական ճեմարանի մասին: Թուրքերը ծուղակ են լարել պայման դնելով, որ ոչ մի օտարածին (Թուրքիայից դուրս ծնված) չի կարող դառնալ հույների կամ հայերի պատրիարքը: Համապատասխան ճեմարանների փակ մնալու պայմաններում դա նշանակում է դրանց ոչնչացումը:

Այս օրերին Թուրքիայի արտաքին քաղաքականությունը մանրազնին քննարկման է ենթարկվում, քանի որ խոստումների եւ նախադրյալների մեծ մասը չի իրականացվել: Թուրքիան Իսրայելի առաջատար դաշնակիցն էր, որը նրան արեւմտյան երկրների անվերապահ աջակցությունն էր ապահովում, բայց Անկարան, արաբական եւ մահմեդական զանգվածների կարեկցանքը սիրաշահելու մղումներով, շատ առաջ գնաց «Մավի Մարմարայի» միջադեպի առնչությամբ եւ լարվածություն ստեղծեց իսրայելաթուրքական հարաբերություններում, որը մինչեւ օրս շարունակվում է:

Էրդողանի արկածախնդրությունը Եգիպտոսում հակադարձ ազդեցություն ունեցավ: Մինչ Թուրքիան պաշտպանում էր «Մահմեդական եղբայրներ» խմբակցությանը, Սաուդյան Արաբիան եւ Ծոցի էմիրությունները պաշտպանում էին զինվորական կառավարությանը՝ քաղաքականապես եւ տնտեսապես: Եվ դա արաբական երկրների վրդովմունքն առաջ բերեց: Նրանք կտրամբեցին սուննիների աշխարհը առաջնորդելու Էրդողանի նկրտումները:

Մյուս կողմից՝ ոչ մի հեռանկար չկա լուծելու Կիպրոսի ճգնաժամը: Այդ երկրում շատ լավ տեղաբաշխված են թուրքական զավթողական բանակային ուժերը, եւ շարունակվում է կղզին անատոլիական գյուղացիներով բնակեցնելու գործընթացը:

Սիրիական պատերազմում ընդգրկվելը պատճառ դարձավ, որ փախստականների մի մեծ հոսք թափանցի թուրքական տարածքներ եւ զարկ տա քրդական ինքնավարության շարժմանը:

Էրդողանի վարչակազմը անշուշտ գիտակցում է, որ Իսրայելի հետ դաշնակցությունը նշանակում է ոչ միայն արեւմտյան երկրների աջակցություն, այլեւ Միջերկրականի ափերին հայտնաբերված բնական գազի պաշարների օգտագործում: Թուրքիան կախված է Ադրբեջանի, Ռուսաստանի եւ Իրանի էներգառեսուրսներից, եւ նախքան Իսրայելը պայմանագիր կկնքի Կիպրոսի հետ, Թուրքիան պարտավոր է հարթել իր հարաբերությունները հրեական պետության հետ, որպեսզի հնարավոր լինի օգտվելու «կարկանդակի իր բաժնից» եւ զրկելու Կիպրոսին իր տնտեսությունը բարելավելու հնարավորությունից:

Անկարան նաեւ, ի հեճուկս ՆԱՏՕ-ի, Պեկինի հետ է բանակցություններ վարում օդային պաշտպանության համակարգերի վերաբերյալ: Երկու տարի առաջ Էրդողանը Չինաստանի կառավարությանը մեղադրում էր ույղուր փոքրամասնության ցեղասպանության մեջ: Այսօր նա ձեռք է մեկնում պայմանագիր կնքելու ռազմական ոլորտի հարցերի շուրջը:

Այս ամենի ֆոնին Հայաստանի հետ կնքված չարաբաստիկ արձանագրությունները մնում են սառեցված վիճակում, եւ հույս չկա, որ դրանք վերարծարծվեն, չնայած Մ. Նահանգներում հավատարմագրված նախկին դեսպաններից մեկն ակնարկել է, որ Թուրքիան պետք է վերահաստատի իր հարաբերությունները Հայաստանի հետ, եթե ցանկանում է բարելավել իր հեղինակությունը միջազգային ասպարեզում:

Մինչեւ օրս Էրդողանի «կախարդական փայտիկը» կարողացել է գլուխ հանել ներքին եւ միջազգային թնջուկներից: Մնում է, որ նա կարողանա իր քաղաքականությամբ հաղթահարել ներկայի մարտահրավերները:

Պետրոյթ, ԱՄՆ
Թարգմ. Հ. Ծ.

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է չեխական «Կարմա» գազի վառարան
Հեռ.՝ 094-48-68-03

# Գիտական կենտրոններ

## Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի 70-ամյակ

# Մեխանիկայի ինստիտուտ



ՀՀ ԳԱԱ համակարգում մեխանիկայի ոլորտում հետազոտությունները սկիզբ են առել ակադեմիայի հիմնադրման օրից: Սկզբից մաթեմատիկայի եւ մեխանիկայի սեկտորում, ապա՝ Շինարարական նյութերի եւ կոնստրուկցիաների ինստիտուտում (1945-1955), իսկ 1955 թ.՝ Մաթեմատիկայի եւ մեխանիկայի ինստիտուտում: 1971 թ. ստեղծվեց Մեխանիկայի ինստիտուտը, որի առաջին տնօրենը դարձավ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ս. Ա. Համբարձումյանը:

Ինստիտուտը ճանաչված գիտական կենտրոն է, ուր կատարվում են տեսական եւ փորձարարական հիմնարար հետազոտություններ մեխանիկայի տարբեր ոլորտներում: Այստեղ ձեւավորվել են մեխանիկայի երկու ինքնուրույն գիտական հզոր դպրոցներ Հայաստանում մեխանիկայի դպրոցի հիմնադիրներ, ակադեմիկոսներ Ն. Հարությունյանի եւ Ս. Համբարձումյանի գլխավորությամբ: Կան լուրջ նվաճումներ նոր գիտական ուղղությունների ստեղծման եւ զարգացման գործում:

Ն. Հարությունյանի կողմից մշակվել է ժառանգական հատկություններով օժտված ծերացող նյութերից պատրաստված մարմինների սողքի տեսությանը, որն այնուհետեւ իր իսկ կողմից ընդհանրացվել եւ զարգացվել է ժառանգականորեն անհամասեռ ծերացող մարմինների համար: Ստեղծվել են այդպիսի մարմինների գծային եւ ոչ գծային սողքի տեսությունները, ինչպես նաեւ ժամանակի ընթացքում աճող մարմինների մեխանիկայի գիտական ուղղությունը, որոնք նոր խոսք եւ էական ներդրում են համաշխարհային մեխանիկայի ասպարեզում:

Կատարվել են հիմնարար հետազոտություններ առաձգականության մաթեմատիկական տեսության բնագավառում: Այստեղ իրականացվել են երկրաչափական տարբեր տեսքի ընդլայնական կտրվածքներով, մասնավորապես պոլիգոնալ ընդլայնական կտրվածքներով, ձողերի ոլորման եւ ծռման խնդիրների համապարփակ հետազոտություններ, որոնց արդյունքները արտացոլվել են մեքենաշինական կառուցվածքների ամրության հաշվարկների վերաբերյալ տեղեկագրում: Էապես զարգացվել են դեֆորմացվող պինդ մարմնի մեխանիկայի դասական եւ ոչ դասական կոնտակտային ու խառը եզրային խնդիրների, ինչպես նաեւ ստրինգերների եւ բարակապատ ներդրակների ու դեֆորմացվող հոծ մարմինների կոնտակտային փոխազդեցության հարցերի վերաբերյալ գիտական ուղղությունները:

Լարումների տարբեր տիպի կենտրոնացուցիչների փոխազդեցության խնդիրներում հետազոտվել են քայքայման մեխանիկայի հարցեր: Մշակվել են կոնտակտային ու խառը եզրային խնդիրների արդյունավետ լուծման վերլուծական եւ թվային վերլուծական մաթեմատիկական մեթոդներ (Ն. Հարությունյան, Բ. Աբրահամյան, Մ. Մանուկյան, Ա. Բաբլոյան, Վ. Տոնոյան, Ս. Մխիթարյան, Է. Գրիգորյան, Ա. Մկրտչյան, Վ. Մակարյան, Վ. Հակոբյան, Կ. Աղայան, Ա. Սահակյան, Լ. Շեկյան եւ ուրիշներ):

Ուսումնասիրվել են բաղադրյալ մարմինների լարվածային վիճակի առանձնահատկությունները եւ ստացվել թերլարվածության պայմանները միացումների գագաթներում: Այս աշխատանքը, որպես գիտական հայտնագործություն, գրանցվել է ՍՍՀՄ պետական գրանցման մատյանում (1971-ին), եւ նրա հեղինակ Կ. Չոբանյանը ստացել է թիվ 102 դիպլոմը (ՀՍՍՀ-ում առաջինը):

Ս. Համբարձումյանի կողմից մշակվել են անիզոտրոպ շերտավոր թաղանթների ընդհանուր եւ սալերի ու թաղանթների ճշգրտված տեսությունները: Նրա կողմից առաջարկվել է միկրոբեւեռ առաձգականության կիրառական տեսության նոր տարբերակ, որի հիման վրա կատարվել են մի շարք կարեւոր հետազոտություններ նանոչափսեր ունեցող սարքերի ամրության եւ տատանումների վերաբերյալ: Ստացվել են ձգման եւ սեղմման տարբեր ձեւով դիմադրող նյութերի առաձգականության տեսության հիմնական հավասարումները եւ լուծվել մի շարք կարեւոր խնդիրներ (Ս. Համբարձումյան, Ար. Խաչատրյան): Ինստիտուտում ստեղծվել է նաեւ բարակապատ մարմինների մագնիսաառաձգականության տեսությունը (Ս. Համբարձումյան, Գ. Բաղդասարյան, Մ. Բելուբեկյան): Ս. Համբարձումյանի աշխատանքները շերտավոր անիզոտրոպ թաղանթների տեսության, բարակապատ մարմինների մագնիսաառաձգականության տեսության, տարամոդուլ առաձգականության տեսության եւ միկրոբեւեռ առաձգականության տեսության բնագավառներում լայնորեն հայտնի են եւ հանդիսանում են էական ներդրում համաշխարհային գիտության մեջ:

Մշակվել են գլանաձեւ թաղանթների ստատիկական եւ դինամիկական հաշվարկի մեթոդներ, ուսումնասիրվել տատանումների եւ կայունության հարցերը: Հաստատվել է թաղանթում ֆլատերային տատանումների հնարավորությունը կրիտիկական արագություններից փոքր արագությունների դեպքում: Դիտարկվել են համասեռ եւ անհամասեռ անիզոտրոպ հատկություններով օժտված նյութից պատրաստված հաստատուն կամ փոփոխական հաստության սալերի ու թաղանթների ստատիկայի եւ դինամիկայի բազմաթիվ խնդիրներ:

Ուսումնասիրվել են կոմպոզիցիոն նյութերից պատրաստված սալերի եւ թաղանթների օպտիմիզացման հարցերը (Գ. Բաղդասարյան, Վ. Գնունի, Լ. Մովսիսյան, Ռ.Կիրակոսյան եւ ուրիշներ):

Առաջարկվել է փոփոխական հաստության սալերի եւ թաղանթների հաշվարկի ճշգրտված մոդել (Ռ. Կիրակոսյան):

Կարեւոր արդյունքներ են ստացվել տարբեր ֆիզիկական հատկություններ ունեցող դեֆորմացվող պինդ մարմիններում էլեկտրամագնիսաառաձգական ալիքների տարածման խնդիրներում: Էական արդյունք է ստացվել պիեզոակտիվ առաձգական միջավայրերի դասակարգման հարցում, որը հնարավորություն է տվել հետազոտել պիեզոառաձգական գծային եւ ոչ գծային ալիքների տարածման առանձնահատկությունները (Ա. Բագդոեւ, Ջ. Դանոյան, Կ. Ղազարյան, Ա. Ավետիսյան եւ ուրիշներ): Էական արդյունքներ են ստացվել շերտավոր պյեզոակտիվ եւ մագնիսապես ակտիվ միջավայրերում էլեկտրաառաձգական եւ մագնիսաառաձգական գծային եւ ոչ գծային ալիքների վարքի հատազոտման խնդիրներում, ինչպես քվազիստատիկ այնպես էլ լրիվ- դինամիկ դրվածքներով: (Գ. Ե. Բաղդասարյան, Մ.Վ. Բելուբեկյան, Ա. Գ. Բագդոեւ, Ջ.Ն. Դանոյան, Կ. Բ. Ղազարյան, Ա. Ս. Ավետիսյան եւ ուրիշներ):

Կատարվում են հետազոտություններ տիեզերական վերելակի կառուցվածքի ամրության եւ դինամիկայի խնդիրների վերաբերյալ: (Համբարձումյան Ս. Ա., Բելուբեկյան Մ. Վ., Ղազարյան Կ.Բ.)

Լ. Աղալովյանը կառուցել է անիզոտրոպ սալերի եւ թաղանթների ասիմպտոտիկ տեսությունը: Գտնված է լարումների թենզորի եւ տեղափոխման վեկտորի բաղադրիչների համար միանգամայն նոր ասիմպտոտիկա, որը հնարավորություն է ընձեռել լուծելու բարակ մարմինների համար բազմաթիվ խնդիրներ, որոնց համար կիրառելի չեն Կիրխհոֆ-Լյավի վարկածները (Լ. Աղալովյան, Ռ. Գեւորգյան, Ալ. Խաչատրյան, Մ. Աղալովյան եւ ուրիշներ):

Ասիմպտոտիկ մեթոդի այն տարբերակը, որն իր զարգացումն է գտել Հայաստանում, հատկապես արդյունավետ եղավ բարակ մարմինների (հեծաններ, ձողեր, սալեր, թաղանթներ) տարածական դրվածքով դինամիկական խնդիրների լուծման, էլեկտրամագնիսա-առաձգականության, կապակցված եւ ոչ կապակցված ջերմաառաձգականության տեսություններով կիրառական նշանակության կարեւոր խնդիրների լուծման ասպարեզներում: Մեթոդն արդյունավետ եղավ նաեւ սեյսմակայուն շինարարության, մասնավորապես, կառուցվածքների վրա սեյսմիկ ազդեցությունների նվազեցման հնարավոր ուղիների առաջադրման հարցերում, երկրագնդի լիտոսֆերային սալերի լարվածադեֆորմացիոն վիճակների որոշման, ըստ ժամանակի նրանց փոփոխման մոնիտորինգի եւ երկրաշարժերի հնարավոր կանխագուշակման հույժ կարեւոր բնագավառներում (Լ. Աղալովյան, Ռ. Գեւորգյան, Ա. Խաչատրյան, Մ. Աղալովյան, Լ. Ղուլղազարյան եւ ուրիշներ):

Կատարվել են հետազոտություններ պլաստիկության տեսության շրջանակներում (Մ. Զադոյան, Ռ. Կիրակոսյան եւ ուրիշներ):

Կատարվել են փորձարարական հետազոտություններ բետոնի, կոմպոզիտ նյութերի, մետաղների, գետնահողերի ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրման նպատակով: Ստեղծվել են փորձարարական սարքեր, մշակվել նյութերի առաձգականության, սողքի, երկարատեւ ամրության առանձնահատկությունների բացահայտման մեթոդներ: Մշակվել են բետոնե սեղմվող եւ երկաթբետոնե ծռվող տարրերի օպտիմալ նախագծման նոր մոտեցումներ: Կազմվել են գետնահողերի ամրության որոշման ՀՀ 178-99 պետական ստանդարտները: Բացահայտվել են ամրանավորված պոլիմերային կոմպոզիտ նյութերի մեխանիկական հատկությունների փոփոխման նոր, կարեւոր կիրառական նշանակություն ունեցող, օրինաչափություններ: Նախագծվել եւ պատրաստվել են տարբեր նշանակության ածխեպլաստե կոնստրուկցիոն տարրեր: Ուսումնասիրվել են հոծ միջավայրերի մեջ բարակ մարմինների ներթափանցման, ինչպես նաեւ արագ պտտվող ռոտորների թրթռասողքի հարցերը: (Կ. Ս.Կարապետյան, Ս. Մեսչյան, Մ. Մարտիրոսյան, Ն. Սարգսյան, Ա. Սիմոնյան, Կ. Ա.Կարապետյան, Հ. Շեկյան, Ա. Վանցյան եւ ուրիշներ):

Խորհրդային տարիներին ինստիտուտը սերտ կապեր է ունեցել խորհրդային ռազմարդյունաբերական համալիրի հետ եւ նրա պատվերով իրականացրել բազմաթիվ հետազոտություններ եւ հաշվարկներ:

ՀՀ ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտը այսօր եւս շարունակում է պահպանել իր բարձր գիտական միջազգային վարկանիշը: Այդ են վկայում ինստիտուտի աշխատակիցների պարբերաբար մասնակցությունը միջազգային տարբեր դրամաշնորհներով կատարվող նախագծերի կատարմանը, գիտական հոդվածների եւ գրքերի հրատարակումը արտասահմանում, վերջին տարիներին կազմակերպված բազմաթիվ գիտաժողովները, որոնց նկատմամբ հետաքրքրությունը միջազգային հանրության կողմից միջոցառումից միջոցառում աճում է:

Կիրառական ուսումնասիրությունների ասպարեզում այսօր նույնպես ինստիտուտը հաջողություններ է գրանցում: Վերջերս, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի եւ Ռուսաստանի Դաշնության միացյալ ինքնաթիռաշինական կորպորացիայի միջեւ ստորագրված հուշագրի շրջանակներում, Մեխանիկայի ինստիտուտը Մոսկվա քաղաքի «Աերոկոմպոզիտ» գործարանի հետ ստորագրեց պայմանագիր, ինքնաթիռաշինարարության ասպարեզում մեծ կարեւորություն ունեցող մետաղկոմպոզիտ միացությունների հոգնածային ամրության հաշվարկի մեթոդոլոգիական հիմքեր ստեղծելու նպատակով:

Լինելով մեխանիկայի ասպարեզում հանրապետության առաջնային կենտրոնը՝ ինստիտուտը չի կարող անմասն մնալ այս ոլորտի կրթական գործընթացից: Ինստիտուտում միշտ գործել է ասպիրանտուրան, իսկ վերջին տարիներին կազմակերպվել է նաեւ մագիստրոսական ուսուցումը: Ինստիտուտի շատ գիտաշխատողներ դասավանդում են հանրապետության տարբեր բուհերում, հանդես են գալիս որպես պետական քննական հանձնաժողովների նախագահներ եւ անդամներ, տարբեր բուհերի ուսանողներ իրենց գիտական պրակտիկան անցնում են ինստիտուտում:

**Վ. Ն. ՀԱԿՈԲՅԱՆ**
**ՀՀ ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտի տնօրեն**

***«Ազգը» հոկտեմբերի 11-ի համարում արդեն տեղեկացրել է, որ գրականության ասպարեզում 2013 թվականի Նոբելյան մրցանակը շնորհվել է կանադուհի Էլիս Մանրոյին: Հաղորդվում է, որ նա դարձել է գրականության ասպարեզում Նոբելյան մրցանակին արժանացած 13-րդ կինը եւ առաջին կանադուհին՝ Նոբելյան մրցանակաբաշխության այդ անվանակարգի ամբողջ պատմության ընթացքում:***

***Ո՞վ է մեզ մինչ այժմ անհայտ Մանրոն: Ի՞նչ ստեղծագործությունների հեղինակ:***

# Չեխովյան խորությամբ ստեղծագործող կանադուհին



***Համացանցի ընձեռած հնարավորությունից օգտվելով փորձենք մեր ընթերցողներին ներկայացնել կենսագրական որոշ տվյալներ:***

Էլիս Էն Մանրոն (օրիորդական ազգանունով՝ Լեյդլոու) ծնվել է 1931 թվականի հուլիսի 10-ին երկրի հարավարեւմտյան մասում գտնվող Օնտարիո նահանգում: Հայրը՝ Ռոբերտ Էրիկ Լեյդլոուն կենդանաբույծ էր, պահում էր հիմնականում աղվեսներ եւ ջրաքիսներ: Մայրը՝ Էն Կլարք Չեմնին ուսուցչուհի էր:

Էլիսը սկսել է գրել վաղ հասակից եւ 1950-ին, երբ դեռ ուսանողուհի էր Արեւմտյան Օնտարիո համալսարանում, հրատարակել է իր առաջին պատմվածքը՝ «Ստվերի չափերը» (The Dimensions of a Shadow) խորագրով: Այդ ընթացքում նա աշխատել է որպես մատուցողուհի եւ գրադարանավարուհի: 1951-ին թողել է համալսարանը, որտեղ անգլերեն լեզվի եւ գրականության մագիստրոսի կուրսերի է հետեւել եւ ամուսնացել Ջեյմս Մանրոյի հետ: Մայր է չորս դուստրերի: 1963-ին Մանրոների ընտանիքը տեղափոխվել է Վիկտորիա վարչական կենտրոն, որտեղ բացել են «Մանրոզ բուքս» գրախանութը, որը մինչեւ օրս գործում է եւ մեծ ժողովրդականություն վայելում: 1972-ին Էլիսը բաժանվել է ամուսնուց եւ վերադարձել Օնտարիո ամբողջովին նվիրվելու գրականությանը: 1976-ին ամուսնացել է աշխարհագրագետ Ջերալդ Ֆրեմլինի հետ եւ տեղափոխվել Քլինտոն (Օնտարիո): Ներկայումս Էլիսը այրի է: Երկրորդ ամուսինը մահացել է 2013-ին

## Մանրոյի գրքերն ու ոճի առանձնահատկությունը

Մանրոն գրում է հիմնականում աղջիկների եւ կանանց ճակատագրերի մասին: Բեղմնավոր գրիչ ունի եւ հիմնականում կարճ պատմվածքների հեղինակ է: Պատմվածքների իրադարձությունները մեծ մասամբ տեղի են ունենում Հուրոն Քաունթիում (Օնտարիո): Նրա ոճի գեղարվեստական արժանիքներից է այն, որ նա կարողանում է կենտրոնանալ մարզային, տեղական առանձնահատկությունների վրա: Մյուսը՝ որ նա ամենագետ ու առանձնաշնորհյալ պատմող է, որը նպաստակ է հետապնդում իմաստավորելու աշխարհը: Իր մատչելի, հուզիչ պատմվածքներում նա ուսումնասիրում, հետազոտում է մարդկային ամենաբարդ բնավորությունները այնպես, կարծես առանց մեծ ջանքեր գործադրելու, չափազանց հարթ ու սահուն, հարակցված ձեւով: Նրա ստեղծագործությունները համարում են այսպես կոչված «Հարավային Օնտարիոյի գոթական» ոճի վառ նմուշներ, նշելով, որ նա «մեր ժամանակների մեծագույն արձակագիրներից մեկն է»: Համեմատում են նրա կարճ պատմվածքները համաշխարհային ճանաչման արժանացած հեղինակների գործերի, հատկապես չեխովյան արձակի հետ: Նրա կարճ ստեղծագործություններում, ինչպես եւ ռուս դասականի պատմվածքներում, սյուժեն երկրորդական է, այնտեղ քիչ բան է պատահում, կարեւորը գործող անձանց ապրումների խորությունն է: Ինչպես Գարան Հոլկոմբն է ասում՝ «Ամեն ինչ այնտեղ հիմնված է ռոպեական բռնկումի, հանկարծակի զգացական զարթնումի, հակիրճ ու նուրբ բացահայտական մանրամասնությունների վրա»: Նրա գործերում «աշխատանքն է, սերը եւ դրանց երկուսի թույլ կողմերը: Նա նույնպես, Չեխովի նման, համակված է ժամանակի եւ նրա անողոք առաջընթացը կանխելու մարդկանց անկարողության զգացումով»:

Նրա հատկապես վաղ շրջանի պատմվածքներում հաճախակի կրկնվող թեման իրենց ընտանիքի անդամների եւ փոքրիկ քաղաքի բնակիչների հետ հարմարվելու պարմանուհիների խնդիրն է: Այդ շրջանի կարճ պատմվածքների հավաքածուներից կարելի է նշել «Ուրախ ստվերների պարը» (Dance of the Happy Shades) 1968-ին գրված եւ նույն տարին արժանացած «Ընդհանուր կառավարչի մրցանակին», «Աղջիկների եւ կանանց կյանքից» (Lives of Girls and Women, 1971), «Մի բան եմ ուզում ասել քեզ» (Something I've Been Meaning to Tell You, 1974), «Քեզ ինչի՞ տեղ ես դրել» (Who Do You Think You Are?, 1978)՝ դարձյալ «Ընդհանուր կառավարչի մրցանակին» արժանացած, «Երիտասարդության ընկերը» (Friend of My Youth, 1990)՝ արժանացած «Տրիլիում» մրցանակին եւ «Բաց գաղտնիքներ» (Open Secrets, 1994) գրքերը:

«Ընդհանուր կառավարչի մրցանակը» Կանադայի բարձրագույն գրական մրցանակն է: 1979-ից 1982 թվականների ընթացքում նա շրջագայության է դուրս եկել՝ այցելելով Ավստրալիա, Չինաստան եւ սկանդինավյան երկրներ: 1980-ին նա զբաղեցրել է Բրիտանական Կոլումբիա եւ Քուինզլենդ համալսարաններում «ռեզիդենս-գրողի» պաշտոնը:

Ավելի ուշ շրջանի (2000 թվականից հետո) գործերում, ինչպիսիք են «Ատելություն, ընկերություն, սիրահետում, սեր, ամուսնություն» (Hateship, Friendship, Courtship, Loveship, Marriage, 2001), որը հրատարակվել է նաեւ «Նրանից հեռու» (Away from Her) խորագրով, «Տեսարանը Քեսլռոքից» (The View from Castle Rock, 2006) եւ «Չափից ավելի ուրախություն» (Too Much Happiness, 2009) գրքերը, Մանրոն իր ուշադրության կենտրոնում է պահում առավելապես միջին տարիքի, միայնակ եւ մեծահասակ կանանց դժվարին կյանքը: Նրա ոճի առանձնահատկություններից է այն, որ ինչ-որ մի ժամանակ նրա կերպարները հայտնաբերում են մի բան, որ լույս է սփռում եւ իմաստավորում է անցյալում տեղի ունեցած մի իրադարձություն: Նրա արձակը բացահայտում է կյանքի երկիմաստությունը, անորոշությունը, լուրջ եւ միաժամանակ հեգնական լինելու երեւույթը, վատ ու անողոք, բայց եւ երբեմն ուրախ եւ անհոգ լինելու զգացումները: Նրա գործերում երեւակայականը միահյուսվում է առօրյա, իրական կյանքի իրադարձություններին եւ դա այնքան սահուն, բնական կերպով, որ գրավում է ընթերցողին եւ նրան կառչած պահում մինչեւ վերջ: Նրա կարճ պատմվածքներում այնքան խորություն կա, որքան շատ գրողների հաստափոր վեպերում:

Մանրոյի պատմվածքները տպագրվել են «Նյու Յորքեր», «Ատլանտիկ մանթլի», «Գրանդ Սթրիթ», «Մադմուազել» եւ «Փարիզ Ռիվյու» պարբերականներում: Նրա «Արջը հայտնվեց լեռանը» (The Bear Came Over the Mountain) պատմվածքը էկրանավորվել է ռեժիսոր Սառա Պոլիի կողմից եւ ցուցադրվել 2006 թվին Տորոնտոյի միջազգային կինոփառատոնում:

Մանրոյի դուստր Շեյլան 2002-ին հրատարակել է մանկական հիշողությունների իր գիրքը՝ «Մայրերի եւ դուստրերի կյանքից: Հասակ առնելով Էլիս Մանրոյի հետ» խորագրով, որով իր հարգանքի ու նվիրվածության տուրքն է մատուցել իր մորը:

## Մրցանակներ եւ պարգեւներ

Բացի 1968, 1978, 1986 թվերին գրականության ասպարեզում վերոնշյալ «Ընդհանուր կառավարչի բարձրագույն մրցանակը» ստանալուց՝ Մանրոն արժանացել է նաեւ բազմաթիվ այլ մրցանակների ու պարգեւների, որոնց թվում կարելի է նշել հետեւյալները. կանադացի գրավաճառների մրցանակը «Աղջիկների եւ կանանց կյանքից» հատորի համար 1971-ին, Մերիեն Էնջելի մրցանակը՝ 1986-ին, «Տրիլիում» մրցանակը 1990-ին, «Վ.Հ. Սմիթ գրական մրցանակը» Անգլիայի գրական շրջանակներից 1995-ին «Բաց գաղտնիքներ» գրքի համար, «Փեն-Մալամուդ մրցանակը» 1997-ին «Կարճ պատմվածքների գրեազանց մատուցման համար», «Լիբրիս մրցանակը», «Օ. Հենրիի անվան մրցանակը» կարճ պատմվածքների ժանրում շարունակական հաջողությունների համար՝ 2006-ին «Կիրք» եւ 2008-ին «Ինչո՞ւ ես ցանկանում իմանալ» գրքերի համար, անգլիական «Մեն Բուքեր» միջազգային մրցանակը՝ 2009-ին, Կանադա-ավստրալիական գրական մրցանակը եւ վերջապես Նոբելյան մրցանակը այս տարի:

Էլիս Մանրոն 1992-ին ընտրվել է Արվեստների եւ գրականության ամերիկյան ակադեմիայի արտասահմանյան պատվավոր անդամ, 1993-ին նրան շնորհվել է Կանադայի արքայական ընկերության «Լոռնի Պիերս մեդալը», 2005-ին՝ Մ. Նահանգների «Արվեստներ» ազգային ակումբի պատվո մեդալը գրականության ասպարեզում, եւ 2010-ին՝ «Արվեստների եւ գրականության օրդենի ասպետ» կոչումը:

Պատրաստեց
ՀԱԿՈԲ ՇՈՒԼԻՆՅԱՆԸ



***ԲԱՔՈՒ***

# Ջամիլ Հասանլիին Ադրբեջանից արտաքսում են ԱՄՆ դեսպանի օգնությա՞մբ

*1-ին էջից*

**Նովրուզովը նաեւ ուրվագծել է, որ Հասանլին «Եվրոպայի հայկական կազմակերպությունների աջակցությամբ այնտեղ աղմուկ կբարձրացնի, որպեսզի մինչեւ վերջ կատարի իրեն վերապահված դերը, իսկ ադրբեջանական ժողովուրդն արդեն առաջիկա 5 տարվա նախագահական լիազորություններ տվել է Իլհամ Ալիեւին»:**

**Նովրուզովին ադրբեջանական վերլուծաբանները համարում են Իլհամ Ալիեւի «մամուլի քարտուղար»: Ըստ երեւույթին, այդ գնահատականն իրականությանը համապատասխանում է: Եվ եթե «վերծանենք» նրա ասածը, ապա կստացվի, որ Նովրուզովի միջոցով Իլհամ Ալիեւն իր քաղաքական մրցակցին «առաջարկում է» ընդմիշտ հեռանալ Ադրբեջանից:**

**Ադրբեջանցի հայտնի վերլուծաբան Արիֆ Յունուսովը «Թուրան» գործակալության խնդրանքով արած վերլուծականում ընդգծել է, որ Ջամիլ Հասանլիին հաջողվել է «կոտրել քաղաքական ապատիայի սառույցը, այն դեպքում, երբ իշխանությունները պնդում էին, որ նրա համակիրները մի քանի հարյուր մարգինալներ են, քվեարկության պաշտոնական տվյալներով Հասանլիի օգտին քվեարկել է 200 հազ.-ից ավելի ընտրող, իսկ թե իրականում որքան է այդ մարդկանց թիվը, մենք կիմանանք տասնամյակներ հետո»:**

**Կարելի է ենթադրել, թե իշխող վարչախմբի համար որքան շոկային են եղել քվեարկության իրական արդյունքները, եթե նա խնդիր է դրել հասնել նրան, որ Հասանլին «արտասահմանյան ուղեւորությունից չվերադառնա»: Փաստացի վարչախումբը Հասանլիին այլեւս քաղաքականությամբ չզբաղվելու, իրեն հատկացված «միջանկյալ դերակատարությամբ բավարարվելու» առաջարկություն է արել եւ, ըստ երեւույթին, մերժվել:**

**Դրանից հետո գործի է դրվել նրան Ադրբեջանից հեռացնելու ծրագիրը: Բացառված չէ, որ «օպերացիան» Բաքվում ԱՄՆ դեսպանատան աջակցությամբ կազմակերպելու պատասխանատվությունն իր վրա է վերցրել Սաֆար Աբիեւը, որին Ադրբեջանում գրեթե բոլոր համարում էին «մարված խաղաքարտ»:**

**Մամուլում տեղեկատվություն էր շրջանառվել, որ Աբիեւին պաշտպանության նախարարի պաշտոնում «կփոխարինի Էլբրուս Օրուջեւը, որը ներկայումս Ադրբեջանի ռազմական կցորդն է Ղազախստանում»: Աբիեւի երեկվա հանդիպումը Բաքվում ԱՄՆ դեսպանի հետ վկայում է, որ նա իշխող վարչախմբին դեռեւս չմատուցած ծառայություն ունի: Շատ հավանական է, որ դա Ջամիլ Հասանլիին Ադրբեջանից հեռացնելն է: Եվ այդ հարցում, բացառված չէ, նրան կօգնի Բաքվում ԱՄՆ դեսպանատու՞նը:**

# «Շանհայ» քառյակը Հայաստանում




«Նրանց ոճը տարբեր է այժմ տարածված ծանր, կծող հարձակողական ոճից, փոխարենը հիշեցնում է նախապատերազմյան եվրոպական քառյակների ազնվական ոճը» («Նյու Յորք թայմս»):

Եվ ահա աշխարհահռչակ քառյակը Հայաստանում է:

Հոկտեմբերի 15-ին Արամ Խաչատրյան համերգասրահում «Երեւանյան հեռանկարներ» 14-րդ երաժշտական միջազգային փառատոնի շրջանակում հանդես է գալու «Շանհայ» քառյակը:

Փառատոնի գլխավոր մենեջեր Սոնա Հովհաննիսյանը երեկ լրագրողների հետ հանդիպմանն ասաց, որ առաջատար կամերային խմբի համերգը միանշանակ երաժշտական տոն է լինելու Երեւանում. «Այս տարի համերգի օրը գրեթե 3 անգամ փոխեցինք, սակայն, միեւնույնն է, մեզ հաջողվեց համաձայնության գալ այն եզակի կամերային խմբի՝ «Շանհայ» քառյակ» հետ:

«Շանհայ» քառյակի համերգային ծրագրում կհնչեն Հայդն լարային կվարտետ ռե մինոր, «Չինական երգեր» ընտրանի (փոխադրումը լարային քառյակի համար Յիվեն Յանգի), «Յահոյի երգը», «Հովվի երգը», «Բերքահավաքի տոնակատարությունը», Պենդերեցկի կվարտետ թիվ 3 «Չգրված օրագրի թերթերից» եւ Շուբերտ կվարտետ ռե մինոր «Մահը եւ աղջիկը»:

Վիրտուոզ տեխնիկայով այս նվագախումբը շրջագայել է Եվրոպայի, Հյուսիսային Ամերիկայի ու Ասիայի երաժշտական խոշոր կենտրոններում:

«Շանհայ» քառյակի առաջին ջութակ Վեյգանգ Լին երեկ նշեց, որ իրենք համերգի ընթացքում կատարելու են նաեւ կոմպոզիտոր Ք. Պենդերեցկու այն ստեղծագործությունը, որի հիմքում հայկական մեղեդի է. «Մենք այդ ստեղծագործությունը կատարել ենք արդեն 50-60 անգամ»:

Իսկ անսամբլի հիմնադիրներից ալտիստ Հոնգանգ Լին լրագրողների հետ հանդիպմանը կիսելով հայաստանյան իր տպավորությունները՝ ասաց. «Առաջին անգամ Հայաստանի մասին լսել եմ հորիցս, երբ դեռ երեխա էի: Նա ինձ ասաց, որ Հայաստանն այն տեղն է, որտեղից սերվել է Արամ Խաչատրյանը»:

Նշենք, որ «Երեւանյան հեռանկարներ» փառատոնն այս տարի մեկնարկել էր Վիեննայի Ֆիլհարմոնիկ նվագախմբի համերգով, որին հաջորդեց Էստոնիայի տղամարդկանց պետական երգչախումբը, «Հորտուս Մուզիկուս» անսամբլը, ինչպես նաեւ Յուրի Բաշմետը եւ «Մոսկվայի մենակատարներ» կամերային նվագախմբի, Դմիտրի Պվորոստովսկու եւ Կոնստանտին Օրբելյանի ելույթները Երեւանում:

Փառատոնը 2008 թ. անցկացվում է Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի բարձր հովանու ներքո: Փառատոնին աջակցում են նաեւ մշակույթի նախարարությունը եւ Երեւանի քաղաքապետարանը:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# Այսօր Դիանա Հակոբյանի «Գույնը կանչում է» անհատական ցուցահանդեսը



Շարժում, արագություն, թեթեւություն, անկշռություն... պարամետրեր, որոնք թերեւս կարող էին ներհատուկ լինել շարժվող պատկերի, սակայն դրանք բնութագրում են Դիանա Հակոբյանի նոր կտավները: Անասելի արագությամբ ընթացող էլեկտրիկ արդյունաբերական բնանկարները ստիպում են մոռացության մատնել իրենց կտավային պատկանելությունը. որոշակի կապ է ստեղծվում մի քանի մեդիա իրականությունների միջեւ, եւ ծնվում է վիդեո եւ լուսանկարչական տարրերով հանդերձ մի նոր գեղանկարչություն:

Դիանա Հակոբյանի վիդեո աշխատանքներին հատուկ խաղի տարրը առկա է նաեւ այս նոր աշխատանքներում, թեեւ այստեղ այդ խաղն ավելի վերացական բնույթ է կրում. այն այլ իրականության մեջ հայտնվելու ձգտումը, փոխանցումն ու ընկղմումն է: Եթե իր վիդեո աշխատանքների մեծամասնությունը կրում է սուբյեկտիվ (անձնական) բնույթ, եւ հեղինակն է ներկա այդ աշխատանքներում եւ խաղում է իր իսկ ստեղծած խաղերը, որոնք երբեմն էլ սոցիալական բովանդակություն ունեն՝ կապված կանանց խնդիրների հետ, ապա այս պարագայում խաղերը տեղի են տալիս կտրվածությանն ու հեռահարությանը: Սա նոր եւ ցանկալի աշխարհի ստեղծումն է: Մասշտաբայնության հենց այստեսակ փոփոխությունն է, որ ստիպում է ոչ միայն հետեւել, այլ նաեւ ցանկալ տեղափոխվել այդ դյութիչ իրականություն՝ հագեցած անհայտ ապագայի կամ հայտնի, բայց անխուս բաղձալի անցյալի վառ ֆանտաստիկ գույներով:

Պատկերված կերպարների «ցատկերի» եւ «անկումների» թեթեւության շնորհիվ այդ կերպարները ներդաշնակորեն միաձուլվում են շրջապատող իրականությանը: Դեռահասների կերպարները, որոնք ձուլվում են բնական կամ արդյունաբերական լանդշաֆտի հետ, ունեն ազատության, խնդության եւ հեշտության անճառ զգացում: Թվում է՝ հեղինակը ամրացնում է այդ ֆանտաստիկ իրականությունը հենց նրանց եսեւում: Այս դեռահասները վերածվում են ազատության խորհրդանիշների եւ ստեղծված իրականության տիրակալների: Երբեմն հեղինակը պատկերում է կերպարի մասնիկ միայն՝ ընդգծելով անդուլ շարժման կարեւորությունը:

Այս կտավները կարելի է անվանել ամենատարբեր տրամադրություններ պատկերելու որոշակի փորձ. դրանց մեջ սողոսկում են երանգներ, ինչպիսիք են միայնությունը, զանազան խոչընդոտների հաղթահարման ձգտումը, մեծ արագությամբ առաջ ընթանալու ցանկությունը, կամ ընդհակառակը՝ ժամանակի կանգնեցումը: Միեւնույն ժամանակ նկատվում է գույնի բավականին հանդուգն խաղ, որը կրկին այս կամ այն տրամադրության կամ հոգեվիճակի արտահայտչամիջոց է: Դրամատիկ երանգները, որոնք բնորոշվում են հանդարտությամբ, հատուկ են բնության եթերային պատկերներին գունային գամմայի իրենց մինիմալիստական կիրառությամբ, այնինչ, արդյունաբերական միջավայրը հագեցած է գունային պոռթկումներով, շարժմամբ եւ արագությամբ: Այսպես, ընդհանուր առմամբ կարելի է նկատել մի քանի զուգահեռ աշխարհներ եւ շերտեր, որոնք պատկերվում են հեղինակի կողմից եւ գոյություն ունեն և՛ մեր մեջ, և՛ մեզնից անդին: Այդուհանդերձ հեղինակը հատուկ շեշտադրում է ոչ թե այն աշխարհը, որտեղ մենք ապրում ենք, այլ այն, որտեղ մենք ցանկանում ենք ապրել, եւ հաճախ այդ աշխարհը մեր երազներն են, որոնք երբեմն այնքան գայթակղիչ են լինում, որ արթնանալը կարծես դառնում է անհնարին:

Բոլոր «ցատկերի» եւ «անկումների» հետապնդածը մեկն է՝ բերկրանք: Դրանք ստիպում են մոռանալ շրջապատող իրականությունը եւ ընկղմում են քեզ միանգամայն այլ՝ խնդությամբ լի աշխարհ: Ականատեսն ենք դառնում բացարձակ արվեստի, որն այդպես էլ պոռթկում է դուրս՝ ազատվելով այլեւայլ կաղապարներից եւ խոչընդոտներից:

ԵՎԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

*Ցուցահանդեսի բացումը տեղի կունենա այսօր, հոկտեմբերի 15-ին, ժամը 18:00-ին, «Դալան» ցուցասրահում, Աբովյան 12, 2-րդ հարկ:*

ՀԱՄԵՐԳ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

# UNESCO-ն հայտարարել է Սայաթ-Նովայի 300-ամյակին նվիրված մշակության տարի



Սայաթ-Նովայի 300-ամյակը այսուհետեւ տոն է ոչ միայն Հայաստանում, այլեւ ամբողջ աշխարհում: Հայ աշուղի ծնունդը կարմիրով նշանավորվեց նաեւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի օրացույցում:

Եվ ահա հոկտեմբերի 20-ին Մոսկվայում տեղի կունենա հռչակավոր հայ աշուղ Սայաթ-Նովայի 300-ամյակին նվիրված համերգ, որը կազմակերպվում է «Արմենիա Փրոդաքշն» պրոդյուսերական կենտրոնի կողմից եւ կանցկացվի Ռուսաստանի գլխավոր համերգասրահում Կրեմլի պետական պալատում:

Նշենք, որ համերգային ծրագրի կմասնակցեն ՀՀ Հանրային ռադիոյի աշուղական երգի վաստակավոր «Սայաթ-Նովա» անսամբլը, ինչպես նաեւ հայկական էստրադայի աստղեր Ալլա Լեւոնյանը, Անդրեն, Արման Հովհաննիսյանը, Գեւորգ Դաբաղյանը, Գուրգեն Դաբաղյանը, Ինգա եւ Անուշ Արշակյանները, Ներսիկ Իսպիրյանը, Սիրուշոն, Սամվել Երվինյանը եւ այլք, իսկ երեկոն կվարեն Նազենի Հովհաննիսյանն ու Սամվել Գրիգորյանը:

Ի դեպ, օրերս արտաքին գործերի նախարարությունը կառավարության դատին է ներկայացրել Սայաթ-Նովայի թողած գրական-երաժշտական ժառանգությունը պրոպագանդելուն միտված նախագիծ: Հռչակավոր մարդկանց եւ հայտնի իրադարձությունների ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2012-2013 թթ. օրացույցում ընդգրկվեց Սայաթ-Նովայի 300-ամյակը՝ Վրաստանի ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործերով ազգային հանձնաժողովի աջակցությամբ: Հաշվի առնելով նշված հոբելյանի մշակութային, ազգային եւ միջազգային նշանակությունը «Սայաթ-Նովա» մշակութային միությունը կազմակերպում է մեծ գործչի 300-ամյակին նվիրված միջոցառումների շարք: Ծրագրի բյուջեն կկազմի 6 միլիոն 154 հազար դրամ, որը կառավարության օրերս տեղի ունեցած նիստում հավանության է արժանացել:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# Էլիզա Խաչատրյանը դարձել է կրկեսային արվեստի համաշխարհային փառատոնի հաղթող

«Իդոլ» կրկեսային արվեստի համաշխարհային փառատոնի հաղթող է ճանաչվել Ցվետնոյ բուլվարի կրկեսի արտիստուհի Էլիզա Խաչատրյանը ճոպանի վրա բալետային վարիացիաների համար: Պարգեւատրման հանդիսավոր արարողությունը կայացել է հոկտեմբերի 13-ին Մոսկվայի Մեծ կրկեսում, որը գտնվում է Վերնադսկու պողոտայում, տեղեկացնում է «Արմենպրես»-ը՝ հղում անելով ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ին:

«Պրոֆեսիոնալները վիճում էին շուրջ երկու ժամ, ապացուցում էին իրենց իրավացիությունը: Ի վերջո մենք սահմանեցինք երկու ոսկե, երեք արծաթե եւ չորս բրոնզե «Իդոլներ»,- պարգեւատրման ժամանակ հաղորդել է Ռուսաստանի ժողովրդական արտիստ Էդգարդ Զապաշնին: Երկրորդ «Ոսկե Իդոլը» հանձնվել է թուրքմենական «Գալքինիշ» խմբին, որը ցուցադրել է ջիգիթների ազգային ձիախաղեր:

«Իդոլ» համաշխարհային փառատոնը կազմակերպել են Ռուսաստանի պետական կրկեսային ընկերությունը եւ Մոսկվայի Մեծ կրկեսը՝ Ռուսաստանի մշակույթի նախարարության օժանդակությամբ:


## «ԱՇՋՅԱՆ ՏՈՒՐ»

Երեւանում նորաբաց Աշջյան տուրն առաջարկում է 8-օրյա (28.12.2013-04.01.2014) անմոռանալի հանգիստ Լիբանանում: Անցկացրեք Ամանորը Բեյրութի առաջին կարգի հյուրանոցում՝ վճարելով ընդամենը 1050€: Գինը ներառում է ավիատոմս, վիզա, նախաճաշ, ընթրիք, ամենօրյա պտույտներ, բացառիկ ճաշկերույթ հայկական Այնճար ավանում:

Աշջյան տուրը կազմակերպում է ուղեւորություններ դեպի Կիպրոս, Քուրդիստանի Էրբիլ քաղաք, Ասորեստան, հայկական սրբատեղիներ եւ ցանկացած այլ ուղղությամբ:

Գրասենյակը զբաղվում է նաեւ հողերի առք ու վաճառքով:

**Մանրամասների համար զանգահարեք մեզ հետեւյալ հեռախոսահամարներով՝
093 38 48 70, 055 69 56 19, 055 04 81 26
կամ գրեք՝ maghov5@gmail.com**

## Մարզական

# ՀՀ հավաքականը 2-րդ տեղի համար պայքարում նվազագույն հնարավորություններ է պահպանում

Այսօր ֆուտբոլի աշխարհի առաջնության եվրոպական գոտու ընտրական մրցաշարը կհասնի վերջնագծին: Հայտնի կդառնան եզրափակիչ փուլի ուղեգրերի բոլոր տերերն ու անցումային խաղերի մասնակիցները:

Ուրբաթ օրը կայացած 9-րդ տուրի հանդիպումներից հետո զգալիորեն սրվեց պայքարը 2-րդ տեղի համար B խմբում, որտեղ հանդես է գալիս Հայաստանի ազգային հավաքականը: Իտալացիները վաղուց նվաճել են եզրափակիչի ուղեգիրը, սակայն դանիացիների հետ մրցավեճում մինչեւ վերջ պայքարեցին ու կարողացան ավելացված ժամանակում խուսափել պարտությունից (2-2): Չեխերն էլ հյուրընկալվելիս 4-1 հաշվով պարտության մատնեցին Մալթայի ֆուտբոլիստներին:



Այսօր Հայաստանի ազգային հավաքականը Նեապոլում կմրցի իտալացիների հետ: Հանդիպումը կսկսվի Երեւանի ժամանակով ժամը 22:45-ին: 2-րդ տեղը գրավելու համար նախ մեր հավաքականը պետք է հաղթի իտալացիներին, դանիացիները սեփական հարկի տակ չպետք է հաղթեն Մալթային, իսկ Բուլղարիա-Չեխիա հանդիպումը պետք է ավարտվի ոչ-ոքի: Համաձայնվեք, որ այս 3 գործոնների միաժամանակյա իրականացումը գրեթե անհնար է: Հարկ է նշել, որ Իտալիայի հավաքականն իր պատմության մեջ դեռ երբեք սեփական հարկի տակ չի պարտվել աշխարհի առաջնության ընտրական մրցախաղերում: Այնպես որ, եթե մեր ֆուտբոլիստներին հաջողվի հաղթել Նեապոլում, դա իրոք պատմական հաղթանակ կլինի:

A խմբում Բելգիայի հավաքականը հյուրընկալվելիս 2-1 հաշվով հաղթելով խորվաթներին, աշխարհի առաջնության ուղեգիր նվաճեց: Ուելս-Մակեդոնիա խաղում 1-0 հաշվով հաղթեցին դաշտի տերերը:

C խմբում շվեդները հաղթելով Ավստրիային (2-1), զբաղեցրին 2-րդ տեղը: Իսկ ուղեգիրը վաղուց ապահովել էր Գերմանիայի հավաքականը, որը սեփական դաշտում 3-0 հաշվով հաղթել էր իռլանդացիներին: Ֆարերներ-Ղազախստան խաղում գրանցվեց ոչ-ոքի՝ 1-1:

Ուղեգիր նվաճելուն շատ մոտ է ՌԴ հավաքականը, որը Լյուքսեմբուրգի հետ արտագնա խաղում 4-0 հաշվով հաղթեց մրցակցին: Իսկ ահա պորտուգալացիները սեփական հարկի տակ չկարողացան հաղթել Իսրայելի հավաքականին (1-1), որի պատճառով ներկայումս 3 միավորով հետ են մնացել ռուսներից: Վերջիններիս այսօր Բաքվում Ադրբեջանի հավաքականի հետ խաղում բավարարում է նույնիսկ ոչ-ոքին:

G խմբում 22-ական միավորով առաջատարներն են Բոսնիայի եւ Հունաստանի հավաքականները: Բոսնիացիները 4-1 հաշվով հաղթեցին Լիխտենշտեյնին, իսկ հույները 1-0 հաշվով պարտության մատնեցին սլովակներին: Այսօր կկայանան Լիտվա-Բոսնիա, Հունաստան-Լիխտենշտեյն հանդիպումները, որոնք էլ կանվանեն խմբի հաղթողին:

H խմբում էլ առաջին տեղի համար պայքարում համառ մրցակցություն է ծավալվել Անգլիայի եւ Ուկրաինայի հավաքականների միջեւ: Անգլիացիները հաղթելով Չեռնոգորիային (4-1), վաստակեցին 19 միավոր: Ուկրաինայի հավաքականը 18 միավոր ունի՝ պարտության մատնելով լեհերին (1-0):

I խմբում վերջնական հաջողությանը մոտ է աշխարհի եւ Եվրոպայի գործող չեմպիոն Իսպանիայի հավաքականը, որին ուղեգիր նվաճելու համար բավական է վրացիների հետ սեփական հարկի տակ կայանալիք խաղն ավարտել ոչ-ոքի: 9-րդ տուրում իսպանացիները 2-1 հաշվով հաղթեցին Բելառուսին: Ֆրանսիայի հավաքականը 3 միավորով հետ է իսպանացիներից:

Ահա մյուս խաղերի արդյունքները. Հոլանդիա-Հունգարիա՝ 8-1, Էստոնիա-Թուրքիա՝ 0-2, Անդորրա-Ռումինիա՝ 0-4, Ալբանիա-Շվեյցարիա՝ 1-2, Սլովենիա-Նորվեգիա՝ 3-0, Իսլանդիա-Կիպրոս՝ 2-0, Ադրբեջան-Հս. Իռլանդիա՝ 2-0, Լիտվա-Լատվիա՝ 2-0, Մոլդովա-Սան Մարինո՝ 3-0:

**Մրցաշարային աղյուսակ**

**B խումբ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Իտալիա | 9 | 6 | 3 | 0 | 17-7 | 21 |
| 2. Բուլղարիա | 9 | 3 | 4 | 2 | 14-8 | 13 |
| 3. Դանիա | 9 | 3 | 4 | 2 | 11-12 | 13 |
| 4. Չեխիա | 9 | 3 | 3 | 3 | 12-9 | 12 |
| 5. Հայաստան | 9 | 4 | 0 | 5 | 10-11 | 12 |
| 6. Մալթա | 9 | 1 | 0 | 8 | 5-22 | 3 |

# Երիտասարդականի 2-րդ անընդմեջ պարտությունը

**Ֆուտբոլի Հայաստանի երիտասարդական հավաքականը Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարում 2-րդ անընդմեջ պարտությունը կրեց՝ 1-2 հաշվով զիջելով ղազախներին: Եթե 4 օր առաջ ֆրանսիացիներից կրած պարտությունը օրինաչափ էր, քանի որ մրցակիցն, իրոք, շատ ուժեղ էր, ապա այս անգամ անհաջողությունում մեղավոր էին մեր ֆուտբոլիստները, որոնք չկարողացան իրենց դրսեւորել ինչպես հարկն է:**

**Թեեւ 1-ին խաղակեսում մերոնք բավականին ակտիվ էին, սակայն այդպես էլ չկարողացան գոլային լուրջ պահեր ստեղծել մրցակցի դարպասին: Իսկ ահա հյուրերը հազվադեպ հակագրոհներից մեկի ժամանակ 31-րդ րոպեին հասան հաջողության: Աջ թեւից տուգանային հրապարակ կատարած փոխանցումից հետո, հսկողությունից դուրս մնացած Ռոման Մուրթազաեւը գրավեց դարպասը:**




**Ընդմիջումից անմիջապես հետո մեր ֆուտբոլիստներին հաջողվեց վերականգնել հավասարակշռությունը: Խառը իրադրությունում աչքի ընկավ Դավիթ Հակոբյանը: Խփած գոլից հետո մեր ֆուտբոլիստները բավականին ակտիվացան եւ կարող էին նոր հաջողության հասնել: Սակայն Աղվան Պապիկյանը նպաստավոր դիրքից վրիպեց, իսկ Կարեն Մուրադյանի հեռահար հարվածից հետո հյուրերին փրկեց դարպասապահ Ստաս Պոկատիլովը:**

**Երկրորդ խաղակեսում էլ ղազախները հաջողակ գտնվեցին: 73-րդ րոպեին տուգանայինի խաղարկումից հետո Աբզալ Բեյսեբեկովը խփեց հաղթական գնդակը: Այսպես Ղազախստանի հավաքականը ռեւանշի հասավ հայերի նկատմամբ սեփական հարկի տակ կրած 0-1 հաշվով պարտության դիմաց:**

## ՇԱԽՄԱՏ

# Լեւոն Արոնյանը նվաճեց «Մեծ սաղավարտը»

**Բիլբաոյում անցկացված շախմատի «Մեծ սաղավարտի» 6-րդ մրցաշարն ավարտվեց Լեւոն Արոնյանի հաղթանակով: Առաջին շրջանում բոլոր 3 պարտիաներն էլ ավարտելով ոչ-ոքի, Լեւոնը վերելքով խաղաց 2-րդ շրջանում: Մաքսիմ Վաշիե-Լագրավին հաղթելուց հետո Լեւոնը կարեւոր հաղթանակ տոնեց նաեւ Մայքլ Ադամսի հետ մրցավեճում, իսկ ավարտական տուրում գլխավոր մրցանակը նվաճելու համար հայ գրոսմայստերին բավարարեց նույնիսկ ոչ-ոքին Շահրիյար Մամեդյարովի հետ:**



**Արոնյանը 6 պարտիաներում վաստակեց 10 միավոր՝ տոնելով 2 հաղթանակ, 4-ն ավարտելով ոչ-ոքի: 9 միավորով 2-րդ տեղը գրավեց Մայքլ Ադամսը: Մամեդյարովն ու Վաշիե-Լագրավը 5-ական միավոր վաստակեցին ու բաժանեցին 3-4-րդ տեղերը:**

**Լեւոն Արոնյանը «Մեծ սաղավարտի» մրցաշարերում 2-րդ անգամ հաղթող ճանաչվեց: Առաջին անգամ նա հաջողության էր հասել 2009-ին: Իր թվիթերյան էջում Լեւոն Արոնյանը հետեւյալն է նշել. «Ինչ հիանալի շաբաթ էր Հայաստանի համար: Ես դարձա Բիլբաոյի «Մեծ սաղավարտի» հաղթող, մեր ֆուտբոլի ազգային հավաքականը հաղթեց բուլղարացիներին, իսկ իմ հայրենի քաղաք Երեւանը նշեց իր 2795-ամյակը»:**

**Բիլբաոյում տոնած հաղթանակի շնորհիվ Լեւոն Արոնյանն իր վարկանիշն ավելացրեց 6,4-ով եւ կրկին հատեց 2800-ի սահմանագիծը: Ներկա պահին նրա ընթացիկ վարկանիշը 2801,4 է, ինչի շնորհիվ Արոնյանը շրջանցեց Վլադիմիր Կրամնիկին ու տեղ զբաղեցրեց 2-րդ հորիզոնականում:**

# Չորս մրցանակակիր

Հունաստանի Սալոնիկ քաղաքում անցկացված սամբոյի աշխարհի պատանեկան եւ երիտասարդական առաջնությունում հայ սամբիստները 4 բրոնզե մեդալ նվաճեցին: Մրցանակակիրներ դարձան Երջանիկ Կարապետյանը (48 կգ), Ռոզա Խաչատրյանը (52 կգ), Էդիկ Պետրոսյանը (87 կգ) եւ Գրիգոր Մխիթարյանը (52 կգ):

# Պատանեկան հավաքականը մոտ է հաջողությանը

Ֆուտբոլի Հայաստանի մինչեւ 19 տարեկանների պատանեկան հավաքականը Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարում Լեհաստանում 1-0 հաշվով հաղթելով տանտերերին, հիանալի հնարավորություն ունի հաջորդ փուլի ուղեգիր նվաճելու: Մեր հավաքականին հաղթանակ պարգեւեց 75-րդ րոպեին Վարդան Բակալյանի խփած միակ գոլը: 4 միավորով Հայաստանի հավաքականը գլխավորեց ընտրական 2-րդ խմբի մրցաշարային աղյուսակը: Նույնքան միավոր ունի նաեւ Ռումինիայի ընտրանին:

Այսօր Լիտվայի հետ կայանալիք ավարտական խաղում մեր ֆուտբոլիստներին բավարարում է նույնիսկ ոչ-ոքին: Ցավոք այդ խաղում մեր հավաքականը կազմի հետ կապված լուրջ խնդիրների առջեւ է հայտնվել: 2 դեղին քարտերի պատճառով հանդիպմանը չեն մասնակցի պատանեկան հավաքականի ավագ Սարգիս Շահինյանը, աջ պաշտպան Ռոբերտ Դարբինյանը եւ կենտրոնական պաշտպան Արմեն Մանուչարյանը:

Հավաքականի գլխավոր մարզիչ Աբրահամ Խաշմանյանը նշել է, որ թեեւ Լիտվայի ընտրանու հետ խաղում մեզ բավարարում է ոչ-ոքին, սակայն շեշտը նման արդյունքի վրա դնելու դեպքում հավաքականը դատապարտված կլինի պարտության: Ուստի մեր ֆուտբոլիստները խաղադաշտ են դուրս գալու հաղթանակի համար: Ըստ Խաշմանյանի, Լիտվան հեշտ մրցակից չէ, սակայն իրեն հայտնի են լիտվացիների թույլ կողմերը, եւ եթե մեր ֆուտբոլիստները կազմակերպված խաղ ցուցադրեն, կարող են հաղթել:

Նշենք, որ վերջին տարիներին մեր պատանեկան հավաքականներն անհաջող են հանդես եկել ընտրական մրցաշարերում՝ չկարողանալով հաջորդ փուլի ուղեգիր նվաճել:

# Գրիգորյանը հետապնդում է առաջատարներին

Ինդոնեզիայի շախմատի բաց առաջնությունում Ավետիք Գրիգորյանը 5 տուրից հետո վաստակած 3,5 միավորով 17-րդ տեղում է: Ավետիքը հաղթեց նաեւ 2-րդ եւ 3-րդ տուրերում՝ առավելության հասնելով Էշա Կարայադեի եւ Անյաս Նովիտայի նկատմամբ: 4-րդ տուրում նա անդրանիկ պարտությունը կրեց Իվան Իվանիշեւիչից, իսկ հաջորդ մրցախաղում հաշտություն կնքեց Անտոնետա Ստեֆանովայի հետ:

Առաջատարը 4,5 միավորով Ալեքսեյ Դրեեւն է, որից կես միավորով են հետ մնում 5 շախմատիստներ:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Հայտարարություն

Տեղեկացնում ենք, որ «Կամուրջ»ՈւՎԿՓԲԸ-ի կողմից առաջարկվող սպառողական վարկերը տրամադրվում են անհատական և խմբային երաշխավորությամբ, հետևյալ պայմաններով.

▼ խմբի անդամների քանակ՝ 3-15 անդամ,
▼ ժամկետ՝ 3-36ամիս,
▼ վարկի գումար՝50,000-2,500,000 ՀՀ դրամ,
▼ տարեկան տոկոսադրույք՝ 18%-24% (հաշվարկվում է վարկի մնացորդի նկատմամբ),
▼ վարկի տրամադրման վճար՝ 1.5%-6%,
▼ սպասարկման վճար՝ 0%- 0.5%,
▼ տուժանք ՝ օրական 1 % (առավելագույնը 45 օրացուցային օր):

Տեղեկացնում ենք նաև, որ «Կամուրջ ՈւՎԿ» ՓԲԸ-ի 2013թ.1-ին եռամսյակի միջանկյալ ֆինանսական հաշվետվություններին կարող եք ծանոթանալ www.kamurj.am «Կամուրջ»ՈւՎԿՓԲԸ-ի պաշտոնական ինտերնետային կայքում:

**"Կամուրջ" Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՓԲԸ, ք.Երեւան, Կալենցի 11**
**Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին միջանկյալ հաշվետվություն**
**2013թ. Սեպտեմբերի 30**

*Հազար ՀՀ դրամ*

| | Հաշվետու ժամանակաշրջան | Նախորդ տարվա նույն ժամանակաշրջան | Հաշվետու տարվա սկզբից մինչեւ հաշվետու ամսաթիվը | Նախորդ տարվա սկզբից մինչեւ նախորդ տարվա նույն ժ-շրջանը |
|---|---|---|---|---|
| Տոկոսային եւ նմանատիպ եկամուտներ | 590,926 | 398,026 | 1,644,180 | 1,241,298 |
| Տոկոսային եւ նմանատիպ ծախսեր | (67,861) | (52,914) | (212,655) | (176,867) |
| Զուտ տոկոսային եկամուտ | 523,065 | 345,112 | 1,431,525 | 1,064,431 |
| Արտարժութային գործարքներից զուտ շահույթ/(վնաս) | 15,519 | 29,585 | (8,380) | (57,772) |
| Այլ գործառնական եկամուտներ | 18,917 | 6,654 | 29,191 | 16,213 |
| Այլ գործառնական ծախսեր | (5,324) | (1,949) | (14,389) | (9,463) |
| Զուտ կոմիսիոն եւ այլ եկամուտ | 552,177 | 379,402 | 1,437,947 | 1,013,409 |
| Վարկերից եւ այլ փոխառություններից կորուստներ | (29,313) | (9,087) | (53,574) | (25,066) |
| Ընդհանուր վարչական ծախսեր | (237,682) | (180,024) | (642,265) | (477,987) |
| Շահույթ մինչեւ հարկումը | 285,182 | 190,291 | 742,108 | 510,356 |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 37,888 | 13,481 | 88,349 | 79,455 |
| Ժամանակաշրջանի Շահույթ | 247,294 | 176,810 | 653,759 | 430,901 |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունք | - | - | - | - |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո | - | - | - | - |
| Համապարփակ ֆինանսական արդյունք | 247,294 | 176,810 | 653,759 | 430,901 |

*Տնօրեն՝*
*Գ. Վարդանյան*

*Գլխավոր հաշվապահ՝*
*Ա. Սահակյան*

**"Կամուրջ" Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՓԲԸ, ք.Երեւան, Կալենցի 11**
**Դրամական միջոցների հոսքերի մասին միջանկյալ հաշվետվություն**
**2013թ. Սեպտեմբերի 30**

*Հազար ՀՀ դրամ*

| | Հաշվետու ժամանակաշրջան | Նախորդ ժամանակաշրջան |
|---|---|---|
| **1. Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական գործունեությունից** | **(1,062,872)** | **(292,120)** |
| **Դրամական միջոցների զուտ հոսքեր մինչեւ գործառնական ակտիվների եւ պարտավորությունների փոփոխությունը** | **656,126** | **437,145** |
| Ստացված տոկոսներ | 1,402,511 | 1,044,885 |
| Վճարված տոկոսներ | (145,942) | (70,789) |
| Ստացված տույժեր եւ տուգանքներ | 20,480 | 9,836 |
| Վճարված աշխատավարձ եւ դրան հավասարեցված այլ վճարումներ | (298,459) | (255,531) |
| Վճարված հարկեր | (322,464) | (291,256) |
| **Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական ակտիվների եւ պարտավորությունների փոփոխություններից** | **(1,718,998)** | **(729,265)** |
| Տեղաբաշխված միջոցների նվազում (ավելացում) | (1,552,282) | (350,764) |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ գործառնական գործունեությունից | (166,716) | (378,501) |
| **2. Դրամական միջոցների զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից** | **(25,089)** | **(21,130)** |
| **Հիմնական միջոցների եւ ոչ նյութական ակտիվների ձեռքբերում** | **(25,089)** | **(21,130)** |
| **3. Դրամական միջոցների զուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից** | **1,119,670** | 438,805 |
| Ստացված վարկերի/փոխառությունների ավելացում (նվազում) | 1,119,670 | 438,805 |
| Բաշխումներ | - | - |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների եւ դրանց համարժեքների վրա | (1,206) | 11,509 |
| **Դրամական միջոցների զուտ հոսք** | **30,503** | **137,064** |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում | 217,646 | 247,236 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում | 248,149 | 384,300 |

*Տնօրեն՝*
*Գ. Վարդանյան*

*Գլխավոր հաշվապահ՝*
*Ա. Սահակյան*

**"Կամուրջ" Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՓԲԸ, ք.Երեւան, Կալենցի 11**
**Ֆինանսական վիճակի մասին միջանկյալ հաշվետվություն**
**2013թ. Սեպտեմբերի 30**

*Հազար ՀՀ դրամ*

| | Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ | Նախորդ տարվա վերջի դրությամբ |
|---|---|---|
| **Ակտիվներ** | | |
| Դրամական միջոցներ եւ բանկային հաշիվներ | 248,149 | 217,646 |
| Բանկերում տեղաբաշխված միջոցներ | 710,285 | 306,313 |
| Հաճախորդներին տրված վարկեր եւ այլ փոխատվություններ | 8,201,814 | 6,890,601 |
| Հիմնական միջոցներ եւ ոչ նյութական ակտիվներ | 91,085 | 83,323 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 53,540 | - |
| Այլ ակտիվներ | 8,439 | 23,784 |
| **Ընդամենը ակտիվներ** | **9,313,312** | 7,521,667 |
| **Պարտավորություններ** | | |
| Ստացված վարկեր, փոխառություններ | 3,786,228 | 3,092,661 |
| Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ | 13,734 | 96,112 |
| Պահուստներ | 35,908 | 41,508 |
| Վճարվելիք գումարներ | 70,000 | - |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | - | 136,673 |
| Այլ պարտավորություններ | 32,157 | 19,177 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **3,938,027** | **3,386,131** |
| **Կապիտալ** | | |
| Կանոնադրական կապիտալ | 4,500,000 | 2,000,000 |
| Լրացուցիչ կապիտալ | 193,044 | 850,404 |
| Գլխավոր պահուստ | 65,702 | 42,465 |
| Կուտակված շահույթ | 616,539 | 1,242,667 |
| **Ընդամենը կապիտալ** | **5,375,285** | **4,135,536** |
| **Ընդամենը պարտավորություններ եւ կապիտալ** | **9,313,312** | **7,521,667** |

*Տնօրեն՝*
*Գ. Վարդանյան*

*Գլխավոր հաշվապահ՝*
*Ա. Սահակյան*

**"Կամուրջ" Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՓԲԸ, ք.Երեւան, Կալենցի 11**
**Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ հաշվետվություն**
**2013թ. Սեպտեմբերի 30**

*Հազար ՀՀ դրամ*

| Նորմատիվներ | Փաստացի մեծությունը | Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը | Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը |
|---|---|---|---|
| Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը | 4,500,000 | 150,000 | խախտում առկա չէ |
| Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը | 5,348,126 | 150,000 | խախտում առկա չէ |
| Ընդհանուր կապիտալի եւ ռիսկով կշռված ակտիվների գումարների միջեւ նվազագույն հարաբերակցությունը (Ն1 նորմատիվ) | 56.6% | 10.0% | խախտում առկա չէ |
| Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը (Ն3 նորմատիվ) | 0.5% | 25.0% | խախտում առկա չէ |

*Տնօրեն՝*
*Գ. Վարդանյան*

*Գլխավոր հաշվապահ՝*
*Ա. Սահակյան*

**"Կամուրջ" Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՓԲԸ, ք.Երեւան, Կալենցի 11**
**Սեփական կապիտալում փոփոխությունների մասին միջանկյալ հաշվետվություն**
**2013թ. Սեպտեմբերի 30**

*Հազար ՀՀ դրամ*

| | Կանոնադրական կապիտալ | Լրացուցիչ կապիտալ | Գլխավոր պահուստ | Չբաշխված շահույթ/վնաս | Ընդամենը սեփական կապիտալ |
|---|---|---|---|---|---|
| *Նախորդ ժամանակաշրջան* | | | | | |
| Մնացորդը առ 2011թ. Դեկտեմբերի 31 | 500,000 | 1,474,982 | | 849,310 | 2,824,292 |
| Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝ | 1,500,000 | | | | 1,500,000 |
| Ներդրումներ կանոնադրական կապիտալում եւ կանոնադրական կապիտալի այլ աճ | 1,500,000 | | | | 1,500,000 |
| Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված եւ շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին | | | | | |
| Համապարփակ եկամուտ | | | | 464,744 | 464,744 |
| Շահութաբաժիններ | | | | | |
| Զուտ շահույթ/վնաս | | | 42,465 | (42,465) | |
| Բաժնետիրոջից շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառություն ստանալու արդյունք՝ առանց հետաձգված հարկի | | (624,578) | | | (624,578) |
| Այլ բաշխումներ | | | | (28,922) | (28,922) |
| Մնացորդը առ 2012թ. Դեկտեմբերի 31 | 2,000,000 | 850,404 | 42,465 | 1,242,667 | 4,135,536 |
| *Հաշվետու ժամանակաշրջան* | | | | | |
| Մնացորդը առ 2012թ. Դեկտեմբերի 31 | 2,000,000 | 850,404 | 42,465 | 1,242,667 | 4,135,536 |
| Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝ | 1,313,351 | | | | 1,313,351 |
| Ներդրումներ կանոնադրական կապիտալում եւ կանոնադրական կապիտալի այլ աճ | 1,313,351 | | | | 1,313,351 |
| Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված եւ շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին | | | | | |
| Համապարփակ եկամուտ | | | | 653,759 | 653,759 |
| Շահութաբաժիններ | | | | (70,000) | (70,000) |
| Զուտ շահույթ/վնաս | 1,186,649 | | 23,237 | (1,209,886) | |
| Բաժնետիրոջից շուկայականից ցածր տոկոսադրույքով փոխառություն ստանալու արդյունք՝ առանց հետաձգված հարկի | | (657,360) | | | (657,360) |
| Այլ բաշխումներ | | | | | |
| Մնացորդը առ 2013թ. Սեպտեմբերի 30 | 4,500,000 | 193,044 | 65,702 | 616,539 | 5,375,285 |

*Տնօրեն՝*
*Գ. Վարդանյան*

*Գլխավոր հաշվապահ՝*
*Ա. Սահակյան*

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 14.10.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: